

ԱՊԱԳԱՅԻ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՆ



ԳՅԱՆԱԳՐԱՑ

1989

ԵՎՐԵՎԱՆ

Հ 7

առաջաւայր
առաջաւայր
առաջաւայր
առաջաւայր
առաջաւայր
առաջաւայր
առաջաւայր

620.9
9-67

Գ. ԳՅՈՒՆՏԵՐ

郵政信箱 1505 號

ԱՊԱԳԱՅԻ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՆ

ԽԱՀԱՐ Դիմուրյանների Ակադեմիայի փոխ-նախագահ Գ. Մ.
Կրժիշտանովսկու ռատզաբանով



QBSZPUS

1938

ՅԵՐԵՎԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Դյունտերի աշխատության մեջ գժվար չե մի քանի բացեր նշել, նա իր զբավիշ թեման չի սպառել, Հարկ լեղած ուշադրությունը չի նվիրված Փոտո-քիմիայի պրոբլեմներին, ուղիոֆիկացիայի և ելեկտրոֆիկացիայի միջև գալիք մերձեցման վրա պատշաճ շեշտ չի գրված, ընդհանրապես ամեններն չի սպառված վերջին համաշխարհային եներգետիկ կոնֆերանսների ամենահարուստ նյութը:

Դյունտերը յերբեմն՝ ինժեներ-պրակարիկի և հասուն տնտեսագետի տեսավարար շափով և հիմավորում ապագա ելնկարուներգիայի իր քննախոսած մեթոդները, Համարձակության բնորոշությունը արդի կապիտալիստական շինարարության սահմանները, նկարագրելով ապագա աշխատանքների վիթխարի հեռանկարները, նա չի կարողանում սոցիալական կողմից զբանք հիմնավորել իրերի գատառական ընթացքի այն դիալեկտիկայով, վարի ըմբռնումը տրվում և միայն Մարքս-լենինյան ուսուցումով:

Ենք անուամենալիվ Դյունտերի աշխատանքն այնքան ապահնդավոր ե, վոր անկասկած արժանի յե թարգմանության, նա ինկատի յե անված ընթերցողների շափազանց լայն շրջանի համար, և վերջինի պահանջը չի հապաղի իրեն վավերացնելու ամեն մի զրադարանում, վորտեղ կիմի այս զիրքը, Պատճառը պարզ ե, վորովհետև հեղինակի զրական տաղանդն աներկրայելի յե, իսկ այն թեման, զորին նվիրված և նրա աշխատությունը, մեծ թեմա յե.

Մենք ապրում ենք մեծ պայքարի և կապիտալիստական հասարակարդի ամրող մեխանիզմում լեղած հակասությունների վիթխարի սրման տարիները, նեխվում և քայլայվում և այդ հասարակակարգը, և ժամանակակից կապիտալիստական ճգնաժամի

ծանր մուրճը մահացու հարվածներ և հասցնում նրան։ Առանց շափաղանցության կարելի յե ասել, վոր այդ հասարակակարգի համար յեկել են այնպիսի ժամանակներ, յերբ նրա աղեղոնների հարար ըրանականությունը զառնում և անեծք, բարերարությունը՝ տառապանք։


Բակ սոցիալական հեղաշրջման շարունակ աճող արագացմամբ լին և սպասում աշխարհն, այնուղի զալիքի այն կողմում։

Դրան վճռողական և ճշգրիտ պատասխան և տալիս մեր յերկրում՝ Առունուրդների յերկրում տարվադ չմեծ աշխատանքների և սոցիալիստական ծավալուն հարձակման հետոնկամքերից յան շրջանը։ Բայց ամեն մի պատմական դործողության եֆեկտանուղիդ համեմատական և նրա վոլորտի մեջ ներզրավոր մարդկային գոյությունների բացմությանը։ Մէնք սկսեցինք—մարդկությունը կվերջացնի։ Մեր աշխատանքների պլացզարմու ու ուսուրանեցն իրենց անմիջական հայտարերամբ սահմանվում են յերկրային ցամաքի միայն մի վեցերորդ մասով, վորը զանգվաւ և մեր տրամադրության տակ, և բնակչության այն թվով, վորը ամրող մարդկության թվի մեկ տասերորդից ավելի պակաս և Բացի այդ՝ մենք սոցիալիստական շինարարության մեջ մասնք շալակած մեր աննախանձելի պատմական անցյալի ծանր բեռ, վորպես ինպուտարիապես հետամեաց մի յերկիք, վորտեղ զերակշռում եր բնակչության անդրագետ մասսան, Զաքնաք և մոռանալ նաև այն, վոր մեր աշխատանքների ամրող իրազրությունն ընթանում և թշնամական կապիտալիստական շրջապատման պայմաններում։ Հեղա և պատկերացնել, թե ամրող մարդկության կողեկարիվն ինչպիսի անհամեմատ ավելի ողտավիտ դրության մեջ կլինի, յեթե նա ամրող աշխարհի յերեսին կկտրատի կապիտալիստական շղթաները, Գյունտերը մեզ ցույց ե տալիս, թե զեռ առաջին շրջանում ինչպիսին կլինի կապիտալիզմից ազտագրված աշխարհի աշխատանքների մասշտարը։ Նա ցույց է տալիս, թե ամեն մի ժամանակակից տնտեսության հիմնական բաղայի, նրա ելեկտրոններգետիկ բազայի վերակառուցման դորում ինչի յե բնգումակ ժամանակակից տեխնիկան, Նա վկայում է, զրանում իրեն պարզ հաշիվ շտալով, թե ինձքան խորն են ժամանակակից կապիտալիստական կարգերի հիմնական հակասությունները, վորոնք մեր աշքի առջև վերջին հաշվով սակառնում են այդ կարգերի խոշոր պաշտպանների բերանով անիծել

Նենց տեխնիկայի առաջադիմությունը՝ Այն թեման, վորի մասին
խոսում եւ Գյունատերը, իրոք մեծ թեմա յէ:

Հոգ չե, վոր այդ թեման ամեն մի մենաշխատ հեղինակի
ուժերից վեր եւ Գյունատերի աշխատության մանրամասնություն-
ների վրա, վորոնք վոչ միշտ զբական են, դերիշխում և մի ինչ
վոր բնդհանուր, անպայման զբական բան: Այդ ընդհանուրը խո-
րը և բազմականաշափ զիաականորեն հիմնավորված լուրն ե՝
աշխարհի բոլոր տարերքների վրա մարդու գալիք
մեծ և հաստատուն հազթանակի մասին: Ցեղ այդ
լուրը պատճեած ե կենդանի և զբավիչ խոսքով: Ավելի շատ թող
լինեն այդպիսի աշխատանքները:

Դ. Կիժիժանովսկի



ԱՇԽԱՄՀՆ ԱՌԱՆՑ ԱՆՈՒԻՆԻ

1913 թվին կայացավ Միջազգային մեծ յերկրաբանական կոնգրեսը։ Այդ կոնգրեսում արքած բազմաթիվ գեկուցումներից ամենակարևորներից մեկը նվիրված եր ածխի համաշխարհային պաշարներին։ Սովորաբար թվերն ըմբռնվաւմ են վորպես չոր և ձանձրայի մատերիալ։ Այդ գեկուցումը նորից հաստատեց, վոր թվերը կարող են հուղել մարդկանց, վորովհետև ածուխի պաշարների և հանուրթի այդ շոր վիճակակազրության հետեւ բարձրացավ ածուխի իսկական սովոր անակնկալ սպառնացող ուրվականը։ Մեզրում թվերը միանդամայն միտթարական երին հնչում։ Մինչև 1800 մետր խորությամբ մշակելիս և սպառման ներկա շտփերը պահպանելիս քարածխի մեզ հայտնի յեղած պաշարները պետք են բավականանային, ինչպես յենթադրվում եր, 6000 տարի։ Մակարէն, գմբախտաբար բանից գույս ե գալիս, վոր մենք անկարող ենք սպառազործել ածխի բոլոր պաշարները, վորովհետև ածխային շերտերի մեծ մասն այնքան բարակ ե, վոր ժամանակակից տեխնիկայով այդ շերտերը մշակելն անհնարին ե կամ համենայն գեպս անշահավետ ե։ Բացի այդ, մշակման համար պիտանի շերտերից ածուխի դգալի մասը ածխային փոշու մնով կորչում ե, վերջապես, մշակվող շերտերում ածխի մեծ քանակություն մեռում ե չողազործված, վորովհետև շատ հանգարերում տանիքի ամրացման համար ստիպված են ածխային սյուներ թողնել։ Յեթե ուշադրության առնենք այս բոլոր հանգամանքները և հաշվի առնենք այն փաստը, վոր ածուխի սպառումն ամեն տարի աճում ե, ապա խոսք չի կարող լինել այն մասին, վոր ածուխի պաշարները կբավականանան 6000 տարի, Այդ սպառնառով գեկուցողը յեղբակացնում ե, վոր ամենից ավելի բա-

բնապատ գեղգում մշակման համար պիտանի ածուխի համաշ-
խարհային պաշարները կրավականան 1500 տարուց վոչ ավելի:

Բայց այդ թիվը մեջինն ե, վորովհետեւ պաշարները տարրեր
անդերում տարրեր են: Այդ հանգամանքը մեծ, նույնիսկ վճռա-
կան դեր է խաղում: Ամենամեծ պաշարները դանդում են ԱՄԵ-ում,
անտեղ դրանք 2000 տարի կրավականանան: Գետը և կարծել, վոր
200 տարի հետո Անգլիան ածուխ չի ունենա, իսկ գերմանական
ածխաշերտերը բարենպատ պայմաններում 400 տարի կրավա-
կանանան: Բացի այդ, ամեն տեղ մնում և մինչույն հաշվի չեն-
թարկվող ֆակտորը, այն ե՝ վոր վոչ վոր չի իմանում, թե ա-
ծուխի սպառման ատահճանական ավելացումն ինչպես կծա-
վալի:

Արդյունարերաշահան աշխարհում ածուխը կարենը դեր է խա-
ղում թե վորպես վառելանյութ և թե վորպես հումույթ անթիվ
անհամար դեպքերում: Նրա դերն այնքան մեծ և ու զանազանա-
կերպ, վոր աշխարհն առանց ածուխի պատկերացնելն աներթա-
կայելի յե:

Բայց և այնպես փորձենք մեզ պատկերացնել, թե ինչ և
նշանակում շաշխաթին առանց ածուխի: Ամենից առաջ չի լինի
վառելիք և կերակուր յեփելու հնարավորություն: Հետո՝ զաղի
բացակայություն, վորովհետեւ զագն ստացվում և ածուխից, ճիշտ
այդպես ել փայտ վառելն անկարելի կլինի, վորովհետեւ ածուխի
բացակայության դեպքում մեր վառարանները մի յերկու տարի
հետո կլափեյին աշխարհի բոլոր անտառային հարստությունները:
Խօրնըստինքյան հասկանալի յե, վոր պիտի դադարի յերկաթու-
դային և շոգենավայրին հաղորդակցությունը: Կդադարի նաև ավ-
տոմորիլային և ոդային հաղորդակցությունը, վորովհետեւ այդ
ժամանակում յերկրագնդում յեղած նավթի ազբյուրներն արգեն
կոպառվեն, իսկ արնեստական յեղանակով ստեղծված վառելա-
նութը նույնպես ածուխից և արտադրվում: Այնուհետև՝ զաղի
բացակայությունը մարգկանց մեծ մասի համար կնշանակե ար-
հետական լուսավորության բացակայություն, վորովհետեւ զաղ
և նավթ չի լինի, իսկ ելեկտրոններզիայի արտադրումը մեծ
մասամբ կատարվում և ի հաշիվ ածուխի: ուստի մենք ստիպված
պիտի լինենք վերապառնալ մարիսին ու ճրազին: Բայց այդ
բոլորը կլիներ միմիայն սկիզբը: Այնուհետեւ, կանգ կառնեյին
այն բոլոր արտադրությունները, վորոնք գործ են ածում ածու-
խը վորպես վառելանույթ կամ վորպես հումույթ: Որինակ՝ քի-

միական խոշոր արգյունաբերությունը դդալի շափով հիմնայում և ածուխի և կոկսացման արգյունքների վրա: Բայց ամենակարևորն այն է, վոր յերկաթանաժքերի մետաղադրդական մշակումն առանց ածուխի անհնարին և, ինչպես նաև անհնարին և հետազավերածակումը, այսինքն՝ պողպատի ու յերկաթի ձուլումը: Եերկաթի բացակայության գեղարքում մերենաների և դործիքների ամեն մի արտադրություն պետք է դադարի: Այդ արտադրությունները պետք են կանգ առնեն նաև ջերմության ու եներգիայի բացակայության հատեանքով, վորոնք ելի նորից ածուխից են ստացվում: Իսկ առանց մերենաների և դործիքների անհնարին կլինի սացիոնալ պյուղատնտեսությունը, վորի դադարեւոց մարգկանց մեծամասնության համար սնունդ չի հերիքի:

Վումանց կարծիքով ածուխի բացակայությունը, հետեարար, պիտի առաջ յերի քաղաքակրթության վոշնչացում: Բայց վորովհետեւ վոչ մի ժողովուրդ աշխայիսի աղքատացման հետ հոժարակամորեն շի շամաձայնվի, ուստի վերահստ ածխային սովի առջին հետեանքը կլինի ածուխով աղքատ յերկրների պատերգմն ընդգեմ այն յերկրների, վորոնք եներգիայի ջրային աղբյուրների տեր են և այդ պատճառով, վորպես հակակշիռ ածուխ ունեցողներին, չեն սպառում իրենց կապիտալը: Հաճախ արտահայտվել են նաև հակառակ դատողություններ այն անձերի կողմից, վորոնք այդ վիճակագրության ճշտության նկատմամբ կասկածում են, վորովհետեւ մենք շարունակ նոր ածխաշերտեր ենք գտնում և բացի այդ, Աֆրիկայում և Ասիայում կան հսկայական շհետախուզված տարածություններ: Այդ խորհրդածություններն ունեն իրենց հիմքը: Սակայն նրանք չեն ժխտում այն փաստը, վոր յերկիրը բարածուխի միայն սահմանափակ պաշար ունի և վորովհետեւ այդ պաշարն անզագար ծախսվում է, ուստի միենույնն է, վազքն ուշ, նա պետք է սպառվի: Վորպես փաստարկում բերվում եր նաև ածուխի նոր առաջացութեանը հսարավորությունը: Բայց այդ փաստարկումը չպետք է ուշադրության առնել, վորովհետեւ ածուխի առաջացման համար հարկավոր միլիոնավոր տարիներն այդ պրոցեսում կանգնած են նրա սպառման դարերի դիմաց Յեկը բույսից ածուխի անցնելու վիճակները, վորոնք մենք ունենք տորփի ու զորչ ածուխի շերտերում, ջերմարար ունեկու-

բյամբ, և մանավանդ յեղած պաշարներով, չեն կարող համեմատության մեջ դրվել զերջնական արդյունքի՝ ածուխի հետ և չեն կարող ապահովել մարդկության դարձացումը, չնայած, վոր առանձին ժողովուրդների կամ յերկրների համար այդ շերտերը խոշոր նշանակություն ունեն (նմանապես և բնական գազի պաշարները համեմատարար սահմանափակ են),

Ռացիոնալ խնայողության տեսակետից նույնպես չի կարելի լուծել ածուխի պրորեմը, Մի կողմից ճիշտ և այն պնդումը, թե ներկայումս ածուխը չափազանց անխնայողաբար և ծախովում, զիսավորապես այն պատճառով, վոր մեծ քանակությամբ այն զործածվում և տնային առորյա կենցաղում։ Բայց յենթադրենք, թե մենք ամբողջ ածուխն սկզբում կոկացման կենթարկենք և ամեն տեղ միայն կոկս կվառենք, զրանից ածուխի պաշարներն ավելի յերկար ժամանակ կրավականանային, բայց ավելի շատանալ շեյին։

Այդ գատողությունները, բնականաբար, ցույց են տալիս, վոր միայն մի յելք կա, ներկայումս մենք ածուխն ողտագործում ենք յերկու նպատակների համար՝ եներդիա ստանալու համար և փորպես հումույթ, և այդ պատճառով մեր ածխային պաշարները նմանվում են մոմի, վորն այրում են յերկու ծայրից, իսկ յեթե ածուխը զործածենք միայն վորպես հումույթ, այն ժամանակ ածուխի համաշխարհային պաշարները կրավականան շատ հազարամյակներ, հետեւարար, եներդիայի հայթալիման համար ածուխը զործածելուց անհրաժեշտ ե դադարել և ըստ հնարավորին շուտով այն փոխարինել եներդիայի մի ուրիշ ազրյուրով։

Ցեթե ուշադիր կերպով քննարկում ես այդ պրորեմը, այն և ածուխի փոխարինումը. աղա ամենից առաջ հանդիպում ես ջրային եներդիային, վորն այժմ ել ածուխով աղքատ յերկրներում (որինակ՝ Զվիցերիայում և Սկանդինավիայում) վաղուց արդեն շատ ելեկտրոկայաններում ածուխին դուրս է սղել։ Ցերկ-բազնդի վրա յեղած բոլոր ջրային աղբյուրների ընդհանուր հղությունը դնահատվում է 330 միլիոն կվտ¹⁾, Բազդատելով դա ածուխի հետ, վորի ընդհանուր հանույթը կազմում է 1 միլիարդ ²⁾, վորը սովորական պայմաններում համապատասխա-

1) Արդ թիվը նվազեցրած եւ Ցես եներդիայի համաշխարհային պաշարների գերաբերյալ լրացնեցի, գլուխը։

2) Թիվը նվազեցրած եւ Ցես նույն տեղում։

նուան և 180 միլիոն կվթ հզորության ողագործությանը՝ մենք կտեսնենք, վոր ու ածուխը միանգամայն կարող ե փոխարինվել տապիտակով։ Այս պարզ հաշվվը, սակայն, ավելի ուշից ուշով քննարկելիս չի արդարացնում իրեն։ Ամենից առաջ մենք տեսնում ենք, վոր հիգրավիկական հզորության մեծ մասն արդեն այժմ ողագործոված ե այն հզորության հետ միասին, վոր տալիս ե ածուխը, Բնականորեն ածուխի փոխարինման համար այդ մասը վերանում եր Առավել ևս կարևոր ե այն, վոր ջրային եներդիքայի ամենահզոր աղբյուրները գանգում են քիչ հետազոտված վայրերում, քաղաքակրթության և արդյունարերության կենտրոններից հեռու։ Ջրային եներդիքայի ընդհանուր հզորությունից մոտ 138 միլիոն կվթ ընկնում է Կենտրոնական Աֆրիկայի վրա, վորակեղ նա բոլորովին չի ողագործոված։ Մյուս 40 միլիոն կվթ զանգում է Հարավային Ամերիկայի համարյա անմատչելի տեղերում։ Յեզ մոտ 52 միլիոն կվթ ևս ընկնում է Ասիային¹⁾։ Այդ 230 միլիոն կվթ մարզկային առաջադիմության կառքին լծելու խնդիրը վու այնքան տեխնիկական խնդիր ե, վորքան տնտեսական հետևյալ խնդիրն ե՝ ստացված ելեկտրական հոսանքն ուղղել այնակղ, վորտեղ նա պահանջվում է արդյունարերական ձեռնարկությունների և եներդիքայի ժամանակակից բաշխմամբ, այդ խնդիրը զուա տեխնիկական կարգի խնդիր ե, վորովհետև ներկայումս հայտնի յեղած տեխնիկական միջոցներն անրազմարդ են եներդիքան հաղարավոր կիլոտետրներ հեռու հաղորդման համար։ Սակայն այդ խնդիրը կլուծվի ամենամոտ ժամանակիներում։ Դրա համար հարկավոր կլինի միմիայն մեկ պայման, այդ այն ե, վոր մենք պետք ե 1000 կվ լարվածություններին ափրապետենք վոչ միայն տրանսֆորմատորներում և կոմմուտացիոն զորեկիցներում (փոխարկիչներում), այլ նաև հաղորդման ողային զծերում։ Դրա համար բոլոր նախադրյալները կան, վորովհետև 380 կվ ունեցող գծերն արդեն աշխատում են։ Շատ հնարավոր ե, վոր մի քանի տասնյակ տարի հետո մենք կկարողանանք կիրառել եներդիքայի անլար հաղորդումը, վորը վոչ պիտանի կրդարձնի հաղորդման վորեն զիծ։ Այն, ինչ վոր մենք այսոր նկատում ենք ռազիոտեխնիկայում և ռազիոհաղորդման մեջ, առաջին յերկշուաբայրն ե այդ հանապարհին։

1) Հեղինակը չէ հիշատակում ԽՍՀՄ-ի ջրային եներգետիկ պաշարները, վորի հզորությունը գնահատվում է ավելի, քան 200 միլիոն կվթ։ ԽԺՀ։

Այսպիսով, մենք կարող ենք հանդիսատ կերպով յենթագրել, վոր կզա մի որ, յերբ մեզ կհաջողվի ոգտագործել ջրային եներդիայի ամբողջ 330 միլիոն կվտ. Արդյաբ դրանով եներդետիկական սովի առաջը վերջնականապես կառնվի: Յավոք սրտի, ոգտականը գեռես բացասական կլինի, վորովհետև այն 180 միլիոն կվտ, վոր ստացվում է ածուխ վառելու հետեանքավ և վորի փոխարինման մասին մենք վերեւում խոսել ենք, կրավարարի մարդկության միայն այսորվա պահանջները: Փորձը ցույց է տալիս, վոր յուրաքանչյուր 20 տարում եներդիայի համաշխարհային դործածումը կրկնապատկվում է, այսպես վոր 1950 թվին դանազան տեղերում կտեղավորվի 375 միլիոն կվտ, իսկ 1970 թ. մի քիչ քմահան այս հաշվի համաձայն, սպառվելիք հղորությունը կտճի արգին մինչև 750 միլիոն կվտ: Բացի դրանից, հարկավոր է նաև հաշվի առնել այն, վոր յերկրի վրա յեղած 33 միլիոն ավտոմոբիլները, յուրաքանչյուրն ունենալով 4,5 կվտ միջին հզորություն, ելի սպառում են մոտ 150 միլիոն կվտ:

Ուր ել վոր նայենք, մենք տեսնում ենք, վոր եներդիայի շաբունակ աճող գործածումը վերջիվերջո չի կարող տևականութեն ծածկվել զոյություն ունեցող պաշարներով: Ամբողջ ջրային եներդիան, նույնիսկ նրա լիակատար ոգտագործման դեպքում, բոլորին անբավարար է: Այսպիսով, սպազա գծվարությունների ժամանակ այդ կողմից ողնություն ստանալու հույսը զուրկլինի:

ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՍԻ ՑԵՂԱԾ ՊԼԱՆՆԵՐԻ


Զնայած մատնանշված դժվարություններին, հարցի լուծումը վերջիպերջ կախված է ջրային եներգիայից, վորովհետեւ կան բազմահարյուր միլիոնավոր կիլովատներ, վորոներ զեռ հաշվի չեն առնված վիճակագրության կողմից, Որինակ՝ Զիրը լուսարի նկուցով Առանայան ովկիանոսից դեպի Միջերկրական ծովը յուրաքանչյուր վայրէյանում է 88 հազար մ³ ջուր, Այդ պատճառով, յեթե Միջերկրական ծովի մականդակն իջեցվի 200 մետր, այն ժամանակ Զիրը լուսարի նեղուցում կարելի յի միանգամայն աղասի կերպով ստանալ 120 միլիոն կվե, վորը կազմում է ջրային եներգիայի ամրող համաշխարհային աղբուրների ¹⁾ 1/3-ը՝ այդ հարավորության վրա առաջին մատնանշողը Հերման Զերդելն եր, վորի պան-Յեվրոպայի¹⁾ նախադին իր ժամանակին շատ եղ քննարկվում:

ԵԶՐԳԵԼՆ այդ պրոբլեմին մոտեցավ վոչ թե տեխնիկական, այլ բաղաբական-անտեսական կողմից: Պան-Յեվրոպայի նախադիը որեաք և անտեսապես բարձրացներ հակառակություններից բղկավող Արևմուտքի յերկրները և միացներ մի ընդհանուր ստեղծագործական ու խաղաղ աշխատանքի մեջ, վորին կմասնակցելին Յեվրոպայի բոլոր մողովուրդները: Այդ աշխատանքի նպատակն է Միջերկրական ծովում նիբնող ջրային եներգիայի ոգտագործումը և նոր հողեր ստանալը Միջերկրական ծովի և Հյուսիսային Աֆրիկայի ափին: Զերգելն ուղղում եր այսպիսով Յեվրոպան սեբտորեն կապել Աֆրիկայի հետ՝ վորպես հումուրյմի աղբյուր և վաճառահնման շուկա և աշխարհի յերկու մասերից սահմանը մի նոր աշխարհամաս՝ տպան-Յեվրոպան: Այդ նոր աշխարհամասը

¹⁾ Միացած Յեվրոպայի Ռուս. Բարդու:

պետք և սեպ լինի կապիտալներով՝ դորեղ պան-Ամերիկայի և բնակչությամբ հարուստ պան-Ասիայի միջև նախ և առաջ մեզ հետաքրքրում և այդ նախագծի տեխնիկական հիմքը, այսինքն՝ նրա իրագործման ինդանակը, Զերգելն իր գտառդության յելակեացին փաստն համարում եր այն հանգամանքը, վոր 50 000 տարի առաջ Միջերկրական ծովի մակարդակը մոռավորապես 1000 մետր ավելի ցածր ե յեղել, քան թե ներկայումս. Միջերկրական ծովի այժմ գրաված տարածության մոռավորապես կենն այն ժամանակ, ինչպես Զերգելն ե ասում, յեղել ե պտղաբեր և բնակչած ցամաք՝ գուցե և Միջին յերկրական վաղ կուլտուրայի ուրորանը. Այսպիսով այն ժամանակ Աֆրիկան ու Ասիան կազմում էին մեկ անրաժման մայր ցամաք. Հետո վրա յե հասել սառցադաշտային շրջանը. վորին հաջորդել ե սարսափելի դելյուվիալային կատասարսիան՝ ջրային վաղողումը, վորը ցամաքի միջինավայր քառակուսի կիլոմետրներ վերածել ե ծովային հատակի. Այդ կատասարսիան Միջերկրական ծովին ավել և ժամանակակից մեծությունն ու ձեմը:

Զերգելն ուղում եր նախակին հաղարամյակների դործը տանել հակառակ ուղղությամբ այն վիթխարի միջոցների ոգնությամբ, վոր ժամանակակից տեխնիկան ունի. Այդ աշխատանքի հիմքը պիտի հանդիսանա այն փաստը, զոր Միջերկրական ծովին առաջ 4140 կմ² ջուր ե կորցնում շնորհիվ այն բանի, վոր արեգակի ուժեղ ճառագայթները, ջուր գոլորշիացնելով 2,5 միլիոն քառ. կիլոմետր տարածության վրայից, ամեն տարի, Միջերկրական ծովի մակարդակն իջեցնում են 1,65 մետր. Այսպիսով Միջերկրական ծովը գոլորշիացող ծով ե. Նրա մակարդակն ինքնուրույնարար ամեն տարի 1,65 մետր կիլոներ, յեթե շինուի ջրի այն մշտական հոսանքը, վորը փոխարինում ե այդ գոլորշիացածին, Զրի այդ հոսանքից ամենամեծ մասը բաժին ե ընկերությիրարարի նեղուցին, վորի ջուրը տեղում չի մնում, ինչպես շատ նեղուցների ջրերը, այլ յուրաքանչյուր տարի Առլանտյան ովկիանոսից դեպի Միջերկրական ծովը ե բերում 2760 կմ² ջուր. Նույնը պետք ե տանը նաև Դարդանելի մասին, միայն այն տարրերությամբ, վոր Սև ծովից դեպի Միջերկրականը յեկող ջրի հոսանքը տարեկան՝ 150 խորանարդ կիլոմետրի յե հավասար, Մյուս 230 խոր. կիլոմետրը տալիս են գետերը, վորոնք թափվում են Միջերկրական ծովի ավազանը, զլիւավորապես՝ Ծոնան, Պոն և Նեղոսը. Մնացած 1000 կմ² տալիս են տեղութերը. Այս



թվարկից, բնականաբար, բղխում և Զերգելի նախազիծը, Զիրբալտարկի նեղուցը կտրվում և ամբարտակով, վոր ձղվում և Տարիփից մինչև Տանձեր (նկ. 1). Դրանով հենց ջրի հոսանքն Առյանտյան ովկիանոսից կտրվում է: Նույնպիսի յեղանակով եւ ամբարտակի միջոցով փակվելու յե Դարդանելի նեղուցը Հանակի մոտ: Դրա հետեանքով Միջերեական ծովի մակարդակն ամեն արքի կիշնի 1,5 մետր, վորովհետեւ ջրի հոսանքը նեղուցով չի փոխարինելու գոլորշիացմանը: Մակարդակի իջեցումն արագացնելու համար Զերգելն ուղում եր, բացի այդ պոմպերի և վասոգող ջրանցքների ողնությամբ Միջերեական ծովի հետ՝ միացնել Սահարայի ցածր շրջանները և այդ յեղանակով մասնակիորեն վողողել դրանք (Դարեսի ծոցի մոտ, մեծ Միքառւ և Կվատատարայի հարթավայրում): Սահարայում ծով ստեղծելու այդ հին նախազիծը պետք և պատղարել հոգ գարձնի Ֆրանսիայի տարածությունից 6 անգամ ավելի մեծ տարածություն ունեցող անպատճ անպատճը: Մրան պետք և ավելացնել Միջերեական ծովի ավազանում ցամաքի առաջացումը, վորովհետեւ Զերգելն ուղում եր ծովի մակարդակի իջեցումը շարունակել այնքան, մինչև վոր այդ իջեցումը, համեմատած այժմյան մակարդակի հետ, կհասնի 200 մետրի: Դրա շնորհիվ Աղբիատակի ծովը բոլորովին կանչետանա, Միցիլիան կմիանա Բուալիայի հետ, Սարդինիան՝ Կորսիկայի հետ, և ամբողջ ծովափի յերկարությամբ ջրից զուրս կզան մի քանի կիլոմետր լայնություն ունեցող շրջանները: Առաջինով մենք կըստանանք 660000 կմ² նոր հող, վորը համապատասխանում և Ավստրիայի, Հունգարիայի, Գերմանիայի տարածությունը միասին վերցրած պիտանի յե բնակության համար, ունի հարուստ արդարանդ հող, մինչդեռ այժմյան ափերը մեծ մասամբ ժայռոտ են և անքերը:

Այս ամենը այդպիսի յերկարաբանական վերականգնման միայն մի կողմեւ է: Այդ վերափոխության հետ սերտորեն կապված և հներդիա ստանալու նախազիծը, վորն առավել ես վիթխարի յե տեխնիկական տեսակետից: Զիրբալտարի նեղուցը փակող ամբարտակի յերկու կողմով պետք և փորվեն շրջանցիկ ջրանցքներ (նկ. 2), Այդ ջրանցքներով 88000 մ³ ջրերը, վոր ներկայումս ամեն վայրկյան հոսում են Առյանտյան ովկիանոսից դիպի Միջերեական ծովը, բերվում են դեպի հսկայական հիդրոռուժակայանները նրա համար, վոր ամբարտակի յերկու կողմում ող-

四百九

Աղավայի եներգետիկան—2

17120



Հայոց առաջնորդության մասին պատճեն է այս գործը՝ ուղարկված էլեկտրոնային փոստով:

տագործելի մակարդակների մեծ տարրերությունը ելեկարական եներգիա ստանալու համար:

Այսպիսով՝ զոլորշիցումը կոմպենսացիայի յենթարկելու համար Միջերկրական ծովը նորից ջրի հոսանք կստանա, ևնոց վոր Միջերկրական ծովի մակարդակի ցանկալի իջեցումը տեղի ունենա. Այդ պատճառով 200 մետր հաշման բարձրության դեպքում, ըստ Զերգելի հաշիվների, մենք կստանանք 120 միլիոն կվ, այսինքն՝ Վալիսն-Զեյկյի վրա զանգող հիդրոկայանի հզորությունից 1000 անգամ ավելի (և 27 անգամ ավելի, քան Անդարի վրա նախագծվող հիդրոկայանը: Խմբ.), իհարկել այդ հիդրոկայանները զործարկելու համար պետք չեր լինի սպասելու մակարդակի վերջնական իշխութեան, վորովնեան զա պետք և մի քանի տառնամյակ տևի: Ուժակայանների մի մասը կարելի յի զործարկել այն բանից հետո, յերբ ծովի գոյություն ունեցող մակարդակը կիշինի 30 մետր, վորպեսզի հնարավորություն լինի շարժման մեջ դնելու Սահարայի վոռովման պոմպերն ու մեքենանները: Միջերկրական ծովի մակարդակի իջեցման հետ միասին եներգիայի արտադրումը շարունակ պիտի ավելանա:

Այսպիսով ստացվող եներգիան այն ծ, օ միլիոն կվե հզորության հետ միասին, վոր նման յեղանակով կարելի յի ստանալ Դարդանելում, վոչ միայն կապահովի նոր ստեղծվելիք ցամաքի եներգիայի մատակարարումը, այլ, բացի զրանից, հզորության զգալի մասը կարող և սպասարձվել ուրիշ նպատակների համար:

Ինչպես տեսնում ենք, այսպիսի իդեան կարող եր վորել վորել նույնիսկ Ժյուլ-Վերնին, իսկ բնչ զրության մեջ և զործն այս նախազդի իրադրժման կողմից, Զերգելը չի ուզում ամրարտակը զնել Զիրքալտարի նեղուցի ամենանեղ տեղում, վարտեղ խորությունը 500 մետրի յի հասնում, այլ ուզում և Տանժերի ծովախորշի և շատ ծանծաղ տեղեր ունեցող Տարեզոյի (Tabesos) խորթերի միջև ափեղ անել, վորի ամենամեծ խորությունը հասնում է 320 մ. Ամբարտակը պետք և ստացվի 29 կմ Ռեզկարությամբ, վորն ունենալով 550 մետր հիմքի լայնություն և 50 մետր զագաթի լայնություն, տալիս և մոտ 3 միլիարդ մ³ հող, վորը Զերգելն ուզում և ստանալ կողքերի ջրանցքները փորելիս ի հարկե, սովորական հողային ամբարտակն այսակը անպետք եւ Դա կարելի յի կիրառել ջրի միայն միասեռակ մակարդակի գեղթում: Այստեղ ամբարտակը պետք և լինի անջրանցիկ

և մեն Շաշման դիմանա, վորովհետեւ նա պետք է պահի ովկիա-
նոսի Շնչումը, վորի մակարդակը վերջիվերջու 200 մետր ավելի
բարձր է լինելու Միջերկրական ծովի մակարդակից. Ուստի Հո-
գը կարող է միայն լիցք ծառայել այդպիսի ամբարտակի համար:
Արտաքին կողմը, ինչպես և ուրիշ բոլոր ամբարտակներում,
նույնպես պետք է կազմված լինի ձևաբառոնից: Մակայն, զբա-
համար պահանջվում է ստորջրյա աշխատանք և, հետեարար,
ստորջրյա սուզարկղներ (քեսօն) և ջրասուզակի հորաններ
(տախտ). Բայց կասկածելի յի, թե կիարովանմ արդյոք այսորվա-
սեինիկան այդպիսի խնդիր լուծելու Ի հարկի, մի քանի տա-
նամյակ հետո տեխնիկան այդ գործը զլուխ կրերի: Ամենավտան-
գավորը կլինի ամբարտակի յերկու կեսերի միացման տեղը, վո-
րոնք կառուցվելու յին յերկու կողմից: Վերջին անցքը փակելը
կլինի շափապանց դժվար գործ, վորովհետեւ այսուել պետք է հաղթա-
հարել վիթխարի հոսանքի ամրոց զորությունը, վորը ներկայումս
ուղղվում է Առանայան ովկիանոսից դեպի Միջերկրական ծովը:
Բայց և այնպես քա միայն տեխնիկական պրոբլեմ և, վորն այս
կոմ այն միջոցով այնուամենայնիվ կարող է լուծվել վորովհետեւ
ավելի փոքր մասշտաբով այդպիսի խնդիրները ներկայումս ար-
դին լուծված են: Այլ կերպ և գործն ուրիշ դժվարությունների
հետ, վորոնք այդ պատճառով ել շատ ավելի կարևոր են: Մի-
ջերկրական ծովում կան շատ նավահանգիսաններ, վորոնցից մի
քանիսները համաշխարհային նշանակություն ունեն (Մարսիլը,
Շնչովան): Մակարդակի իջեցման դեպքում նրանք բոլորը կան-
ունաքառնան, վորովհետեւ մի քանի կիլոմետրանոց լայնություն
ունեցող նոր յերկրները նրանց կհետացնեն ծովափից: Յեվ ինչ-
ողըս իրեն կզահի յերկրը, յերբ կանհետանա ջրի բեռը, վորն
այժմ զարծում և ափի շերտում: Չե վոր Միջերկրական ծովի
յինթահողն ամենին հաստատում չե, այդ մասին վկայում են
դուն Ռտալիայի հրաբուխները, վորոնք զարծում են հազարա-
մյակների ընթացքում: Թված պրորեմերի համեմատությամբ
դուռ տեխնիկական դժվարությունները հետին պլան են նահան-
ջում: Նախազին իրազորման հետ կազմված բոլոր մանրամաս-
նությունները՝ ամբարդակի յերկու կողմի նավարկելի շլուղնե-
րը, Սուեզի ջրանցքի մուտքի մոտի 73 կիլոմետրանոց շլուղա-
յին ջրանցքը, հիմական ելեկտրական կայանները Ռուսայի և Նե-
ղոսի գետաբերաններում, մինչև այժմ չտեսնված զորության
մեքենաների ազդեցատները, մի քանի հազար կիլոմետր յերկա-

բություն ունեցող ելեկտրոնադորպման գծերը, չորացվելիք հողի ժակերեսի վրա ազերի շերտը հեռացնելը, կուսական հողը յերկրագրերի թյան համար յուրացնելը և այլն, —այս բոլորը տեխնիկան կկարողանա կատարել տասնամյակների ընթացքում, և նույնիսկ ժամաները, վոր մատավորապես 8 միլիարդ դոլար են զնաւառվում, կարելի կլինի աստիճանաբար հատուցել՝ ձեռնարկության անտարակուսելի ոգտավետության պատճառով, Մնում են վորպես անհայտ ֆակտորներ՝ բնությունը և մարդիկ, Ձերդելի կարծիքով, պան-Յեվրոպայի նախագիծի վերջնական նպատակը — զա Յեվրոպան Աֆրիկայի հետ միացնելն եւ գարձնելով մի հզոր աշխարհամաս, վորը զանվում ե պան-Ամերիկայի և պան-Ասիայի միջև, Միջերկրական ծովի մասնակի չորացման և Սահարայի զոռոգման միջոցով Աֆրիկայի և Յեվրոպայի միջն կամուրջի իրականացումը նշանակում է վոչ այլ ինչ, յեթե վոչ Միջերկրական ծովում ուժերի գոյություն ունեցող հարարերակցության վոչընչացում և նրա փոխարինումը բարձրագույն կազմակերպությամբ, մորտերդ պետք է մասնակցեն Յեվրոպայի բոլոր առաջավոր ժողովուրդները, Այդ նախադիմք, վոր հսկայական նշանակություն ունի նամաշխատնային եկոնոմիկայի բնագավառում, կապված է զոյություն ունեցող քաղաքական փոխարարերությունների բաղմաթիվ բարեփոխութերի հետ, Կտուժեյին Անդիայի շահերը, վորի վերիշխող զիրքը Զիրքալուարի նեղուցում շոշափված կլիներ, վորի վերիշխող զիրքը Զիրքալուարի նեղուցում կտուժերի շահերը, վորի մեծագույն իր մեծությամբ կրկնակի կմեծանար, Այդ ամբողջը կախված կլիներ մեկ ամբաբառ կից, վորի ավերումը պատերազմի դեպքում հեղեղում կպաճառակը մի մարզի, վորն իր տարածությամբ ավելի մեծ ե, քան Գերմանիան, Իսկ մը կը պաշտպանի շահազրդոված յերկրներին այդպիսի հնարավորություններից, Ո՞վ կ կպաշտպանի զոռոգման ջրանցքները և բարձր լարվածության հաղորդակարերը, վորոնք անցնելու յեն շատ պետությունների միջով, և կտրելու յե մի զյուժին սահմանները ։ Դնել այս հարցը — դա նշանակում է պատասխանել նրան, Պան-Յեվրոպայի նախադիմն անցկացնելու համար անհրաժեշտ նախադրյալ և հանդիսանում ուժերի յեվրոպական փոխարարերության արմատական փոփոխությունը ։ Հնարավոր ե, վոր 100 տարի հետո նախադիմք կիրապործվի վորպես Յեվրոպայի Միացյալ նահանգների տռաջինը ընդհանուր մեծ աշխատանքը,

Բոլորովին այլ նկատառութերից ե բղխում Միջերկրական ծովի վրա հներդիա ստանալու Փրանսիական նախադիմք, վորի

Նեղինակն և Պիյեր Գանդը իլիոնը, իր չափերով այս նախազիծը շատ և հետ մոռմ պահ-Ծեվրոպայի նախագծից, բայց զբա փոխարեն տեսնիկական կողմից նա ավելի լավ և հիմնավորված, վարովինեան նա արգեն ներկա ժամանակում իրավուրծելի յէ¹).

1) Զերգելի նախագիծը՝ Զերգալտորի նեղուցում ամբարտոկ կառուցեցաւ միջազգ Միջերկրական ճագի տակարգական իշխանելոց, առաջազրութ և ակնհայրական իմպերիալիստական ձգութեան և կապիտալիստական իրակարգի ըը-ջանակներում առել առաջին և ուսույնական ընտրյթ:

Զերգելի մաս այս նախագծի առեղման հիմնական չափանիքը և անդի անում և Աֆրիկան վրացն հումույթի ազգյուր և զանազանաման չափա, Ծեվրոպայի հետ սերտորեն կապելու ցանկությունը։ Այդ թելազրութ և համեյալ ձգութագի պատագործել Աֆրիկան վրացի յեվրոպական իմպերիալիստական յերկրների գաղափ ընդզիմ էկապիտայներով դորեղ պահ-Ամերիկայի և քրնակիությամբ հարաւա պահ-Ասիայի մզգու պայքարում, Վոչ թե ընտրյան հարաւա թյաններն ու ուժերի առցինալ պատագործելու ցանկությունը, այլ զուտ իմպերիալիստական ձգութեան հն կազմում այս նախագծի հիմքը, վարը, Դյունաների կարծիքով, միայն պահ-Ծեվրոպան կարող և իշխագործել։ Մեզ համար Դյունաների այդ կառավատաթերը նախագրական գործություն Ամերիկայի ամելի արտադրագույն կառավագեներու համար (Անբին, Եկեղ. XVIII համար, էջ 220):

Զերգելի նախագծի ան այդ իմպերիալիստական ընտրյթը հենց (իսկ ուրիշ կերպ նա չի ել կարող լինել իմպերիալիզմի ըլլանակներում) այդ ըը-ջանակներում այս նախագիծը գործառ և ուսուլիստական իմպերիալիստական իրականության պայմաններում նրա իրակարությունը վոչ թե կրույսներ, այլ կունքացներ իմպերիալիստական հակասությանները։ Դա կնշանակեր մի սարսափելի սպանալիք Ամերիկայի և Ասիայի համար, այսինքն՝ Ամերիկայի և Ասիայի պետությանների իրա զիմանցություն։ Այդպիսի պայմաններում Զերգարտորի ամբարտուի կառավել—կնշանակի մի շահմանած պատրազմ առաջացնել նրա յեվրոպական կառուցողների և նացան ամբողջ ուխարէի մրէն, իսկ պատերազմ—զա նշանակելու յի ամբարտուի ավերութ ուղարկին առաջնությամբ։ Սեփ բացի դրանից, զժվար և նույնիսկ պատերացնել այն տարածայնությաններն ու դարձրու, զոր կառաջանան հենց յեվրոպական պետությանների մրէն այն սպանները բաժանելիս, վարանց կարող են սահացնել։ Զերգելի նախագծի իրականակալուց, մանավանդ, զոր զժվար և պատերացնել, թե այդ սպաններից բնչողն կարող են պատին այն յերկրները, վարանց Միջերկրական ճովից ներ ընկած։

Այս ուժնեց հարկադրու և զալ այն յերշտացության, զոր այդ հակա-յական և հետաքրքրէ նախագծի իրավուրծումը ներկայաւու ուսուլիստական և, անհարին և Այդ իրազործումը միայն պատգա սցիսլիստական հասցա-կության համար կը ինչ նրա ուժերին համապատական նմը։

Բացի զբանից, այդ նախազիծն ունի նաև այն առավելությունը, վոր նրա իրազորումը կարելի յէ կրկնել ամեն անդ, վորտեղ դրա համար կան բնական նախազրյալներ: Նախազիծի Փիզիկական հիմնավորումը շատ պարզ և և հեշտ հասկանալի, Պատկերացնենք մեզ յերկու ջրավազան: մեկը՝ ծովի մակարդակի վրա, մյուսը՝ սարի վրա: Այդ յերկու ջրավազանները միացնելով, կարելի յէ ստանալ ջրի անկում, այնչափ անսպառ հներգիա ստանալու համար, և նույնչափ ել լավ կիրառելի ինչպես վոր բնական ջըրվեմը: Զրի այդպիսի անկում կարելի յէ ստանալ միայն պահպանելով յերկու պայման, այն և՝ վերին ջրավազանը պետք և անըսպառ լինի, իսկ ներքին ջրավազանի մեջ բերվող ջուրը պետք և այդպեսից դուրս արգի նույնպիսի արագությամբ:

Ոչ ավելի մանրամասնորեն կքննարկի այդպիսի ռպերպետում-մօրիեյից (մշտնջենական շարժիչ) իրացման հնարավորությունը, նա հեշտությամբ կհասկանա, վոր մատնաճշված նախազրյալները, վորոնք առաջին հայացքից անիրազործելի յեն, կարող են իրազործվել շատ տեղերում: Նույնիսկ դեռ ավելին՝ այդ նախազրյալներն արգեն հազարավոր անդամ իրազործված են, վորովհետեւ մեր զետերի և ջրային հսուանքների շարժումը կատարվում և հենց այդպիսի մեխանիզմի հետևելով, Վերին շանհատնելից ջրավազանն և հանդիսանում մթնոլորտը, վորն իր տեղումներով ստունդ և տալիս բոլոր աղբյուրներին: Իսկ ցածի ջրավազանը ծովն և, վորից բերվող ջուրն անընդհատ հեռանում և չնորհիլ արեգակի ճառազայթներով տաքանալուն: Հսկայական շափեր ունեցող բնական շողեկաթայի նման, ծովն ամեն անդամ իր մեջ թափվող ամրող ջուրը գոլորշու ձևով հետ և տալիս դեպի մթնոլորտը: Այս յեղանակով այդպիսի օգտնջենական շարժման ստեղծումը վերջին հաջովով հանդում և այն բանին, վոր մարզը հանձն առնի վերափոխելու աշխարհը և նոր արհեստական ջրավազաններ ստեղծի այնուեղ, վորտեղ բնական ջրային ուժերը չեն հերիքում:

Այս բոլորը հնչում ե ֆանտաստիկորեն, բայց իրականում միանդամայն սեալ և, յեթե մենք, ինչպես, յենթադրում ե Գանգրիմոնը, բնական պրոցեսը ճիշտ հակառակ կոզմը շուռ տանք: Անսպառ ջրավազանի դերը բաժին կը նկնի ծովին: Վոչ մի կառկած չկա, վոր նա գործնականում իրոք կհանդիսանա անսպառելի: Տվյալ գեպքում Գանդըիլիոնը մտածում և Միջերկրական ծովի մասին, վորովհետեւ նրա տոտինյա վայրերը Հյուսիսյային

Արքիկայում և Աբարիայում ունեն բաղմաթիվ փոս ընկած տեղեր, զորոնք կարող են ոգտագործել զորպես ցածրադիր ջրավազաններ, Ռինակ՝ կարելի յի անվանել Շոտ-Ռարզան (Schott-Rharsa) Ալժիրում (21 մետր ծովի մակերեսույթից ցած) և Մերսիքը Թունիսում (31 մետր ծովի մակերեսույթից ցած), ինչպես նաև Տրիպոլիսում¹⁾ Առողիլայի և Սիդայի միջև գտնվող վայրը (30 մետր ծովի մակերեսույթից ցած), ըստ ամենացլիխավորը—դա Հարդանանի հովիտի հարթությունն ե, վորը հյուսիսից սահմանափակվում և Տիբերիական լճով (208 մետր ծովի մակերեսույթից ցած) և հարավից՝ Մեռյալ ծովով, վորը 394 մետր ցած և Միջներկրական ծովի մակերեսույթից Այստեղ համարյա 400 մետրանոց բարձրությամբ ճշգրտմ և ստեղծվում: Այս բոլոր վայրերում յերկրորդգ պայմանի կատարումն ապահովված ե, զորովհետև այդ ըստ ջանները խիստ տաքանում են արենի ճառագայթներով, աչքի յին ընկնում տեղութերի փոքր քանակությամբ՝ ունենալով բարձր ջերմաստիճան²⁾, և այդ պատճառով ել նրանց մեջ ջրի զգալի դոլորչիացումն ապահովված ե:


Բերլող ջուրը՝ հեռացնելու խնդիրը, ինչպես յերեսում ե, արեն ինքն ե կատարում, ընդ սմին անհրաժեշտ է ջրի մուտքը կարգավորել նրա գործոշխացման համապատասխան: Այսպիսով, իրականության մեջ, այստեղ վոչ մի պերպետաւմ-մորթիե չկա: Այստեղ նույնպես, ըստ հներգիայի փոխարկման որենքի, ստացված եներգիային համապատասխանում ե տրված եներգիայի հավասար քանակը:

Բայց այդ սպավող եներգիան հայթայթվում է վոչ թե մեր կողմից և վոչ ել վորեն յերկրային միջոցներով, այլ արենի կողմից: Արենի ջերմային ճառագայթումը, վորը գենու անմատչելի յի անմիջական ոգտագործության համար, կարող ե այդպիսի սլաքը յեղանակով վերածվել ոգտակար եներգիայի: Վերջին հաշվով Գանդըրիլիոնի նախագծում մենք զորք ունենք մի զրույթի հետ, վորն ոգտագործում ե արենի եներգիան: Այդ ոգտագործումը սակայն, տարգում ե վոչ թե այն չնչին միջոցներով, յերբ արեգակնային եներգիան կենարունացվում ե թանկագին ոգտիկական զորքի ների սղնությամբ մի պստիկ շողեկաթսա տաքացնելու համար: Ընդհակառակը, Գանգըրիլիոնն ոգտագործում ե հենց այն

1) Հարդանանի հավասար արգեն մայիսի սկզբին ջերմաստիճանը բարձրանում է 40° C-ից սկզբում:

պրոցեսը, վորը բնական շրջանառության ժամանակ տեղի յեւ ունենում յերկրի մակերևույթի վրա, այն է՝ չըի գոլորշիացումը բնական շողեկաթառների մակերևույթը, վորպիսից հանդիսանում են ծովերն ու լճերը:

Սակայն այսուղ ևս նախադի իրազործումը կապված է զգալի գեղարությունների հաղթահարման հետ: Գլանի կատարման համար հարկավոր ըոլոր հարթությունները Միջերկրական ծովից բաժանված են վոչ միայն առաջնյա լայն շերտերով, այլ նաև բարձունքներով: Այսպիսով՝ ամենից առաջ անհրաժեշտ է



Նկ. 3. Այն նախադի սխեման, վորով Միջերկրական
ծովում հներգիտ յեն ռատուտու, մրացնելով հողի
բնական իջվածքների հետ:


ընտրել վոչ չափազանց թանկ և գործնական մի միջոց, վորպեսզի, չնայած այդ խոչընդութին, միացվեն յերկու ջրավազանները: Դրա համար Գանդրիլիոնն առաջարկում է Յ-րդ նկարի վրա պարզաբանված միջոցը: Այդ նկարի վրա պատճեն թուուցիկ հայացքը ցույց է տալիս, վոր Գանդրիլիոնի իդեան, անկասկած ծագել և մեծ պոմպային աեղակայանքների աղղեցության տակ, վորոնք վերջերս ավելի հաճախ են կիրառվում եներգետիկական անտեսության մեջ հիդրոելեկտրական և ջերմելեկտրական կայանների ազատ եներգիան կուտակելու համար, յերբ այդ եներգիան ոգտագործվում և ավելի բարձրում գտնվող ջրավազանի մեջ պոմպով ջուր լցնելու համար:

Մոզի և գոլորշիացնող ջրավազանի միջն վորպես սխեմայի յերրորդ ելեմենտ մացվում և մի ջրավազան, վորը անդավորվում և Միջերկրական ծովը հողի իջվածքներից բաժանող լեռնաշարի վրա: Հսկայական պոմպերը ջուրը հանում են Միջերկրական ծովից և այն մղում են ուղղաձիգ խողովակներով գեղի միջակա ջրավազանները: Այստեղից ջուրը ճնշման խողովակներով թափ-

վլում և ելեկտրոկայանի տու բրինձների վրա, վորպեսզի հետո թափվի դուլուշիացնող մեծ ջրավազանը, Յեթև ջրի անկման բարձրությունն ավելի մեծ և մակարդակների տարրերությունից, վորը պոմպերը պիտի հաղթահարեն ջռւը բարձրացնելիս, այն ժամանակ պոմպերի աշխատանքի համար ծախսվում և տու բրինձների արտազրած եներգիայի միայն մի ժամը, Մնացած եներգիան կարող և ոգտակար կերպով ոգտագործվել:

Այս իդեան Գանդը լիլինն ուղղում և ոգտագործել Հորդանան զետի հոգիտի պայմաններում, վորը Տիբերիական լճի մակարդակի վրա Միջերկրական ծովից բաժանված և մատ 50 կմ լայնությամբ առափնյա շերտով, Ծովափից 20 կմ հետավորության վրա բաժանող բարձրունքի լեռնաշարն ամենափոքր բարձրություն ունի՝ մասամբուապես 80 մետր (նկ. 4), Այդ տեղում պետք և սարքել արհետական լճակ, վորի մեջ պիտի թափվի ծովային ջուրը հզոր կենարոնախույս պոմպերի միջոցով, Այսանզից յերկար ջրանցքով, վորի մի մասը զետնի տակ թօւնելի մեջ և փորձած, ջուրը տարվում և սարի մուս կողմը՝ գեղի ջրանշիչ կայանները և հետո՛ ճնշիչ խողովակներով իշխում և դադի ելեկտրոկայանը՝ ունենալով մակարդակների համարյա թե 300 մ տարրերություն, թափվում և ծովի մակերեսութից 208 մետր ավելի ցած գոնզող Տիբերիական լճի վրայի հիդրոելեկտրական կայանի մեջ, Յերբ ջուրը առ բրինձներում իր աշխատանքը կկատարի, այն ժամանակ նա Հորդանան զետի մյուս ափով բաց ջրանցքով տարվելու յի մինչև Մեոյալ ծովը, վորաեղ մակարդակների 180 մ լրացուցիչ տարրերությունը կարող և ոգտագործվել յերկրորդ հիդրոելեկտրական կայանում, Այդ կայանի արտատար ջրանցքը պետք և թափվի Հորդանանի զետար-բանը:

Վորպեսզի տեսնենք, թե ավյալ զետքում ինչպիսի հզորություններ կարելի յե ստանալ, մենք պետք և ուսումնասիրենք արեգակնային ջերմության գոլորշիացնող աղղեցությունը, Ֆրանսիական աղաղործարաններում արելի ճառագայթների աղղեցության տակ ամեն որ գոլորշիանում և 16 մմ հաստությամբ ջրի շերտ, ընդ վորում հարցը վերաբերում է շատ ծանծաղ ավաղաններին, մինչդեռ մեծ խորության զետքում գոլորշիացման ոյունը կարելի յե հաշվել ամենաշատը 3—6 միլիմետրի հավասար, Դրան համապատասխանում և Մեոյալ ծովի գոլորշիացման բալանսը, վորովհետեւ նրա մակերեսից, վորը հավասար և 926 կմ², միջին հաշվով յուրաքանչյուր վայրկյանում 100 մ³ ջուր և գոլորշիա-



Նկ. 4. Գ աղբելիսնի նոխագեր սիհմանն

Վերևում ձևախց՝ Միջնրելուսկան ծովը, զորի միջն հզոր պամպերով շուրջ քարեցացնում են վերևում տեղագործած ջրավազանը Այսուղից հուրը ջրանցքների և ջրանցքի խոսքակիների միջն թափառմ և հարզանան զետք հաջիաց, առաջացնելով մի հոկայական ջրվեժ, զորի ջրի անկաւմը կաշելի յէ պատրաստել յերկու եկեղակալութեանը:

նուռմ: Բայց այդ գոլորշիացումն աննկատելի յե, վորովհետեւ նաև հենց լրացվում ե գետերի ջրի, մանավանդ Հորդանանի առնոսումնով: Այս հանգամանքներն ընդունելով վորպես հիմք, մենք տեսնում ենք, վոր Միջերկրական ծովից գեղի Մեռյալը յեկող ջրի հոսումը կրաքարացնի վերջինի մակերևույթը, հաշիվը ցույց ե տալիս, վոր 30 մ³/վարչկան ջրի հոսանքը Մեռյալ ծովի մակերեվույթը մեկ տարում կրաքարացնի 1 մ: Սակայն այդ հաշիվը յենթազրում ե ուղղաձիգ պատերով ավագանի առկայություն, այն ինչ Մեռյալ ծովը հարավից և հյուսիսից սահմանափակված է հոկտյական անապատային հարթություններով: բարձրացող ջուրը, ինարկե, կտարածվի այդ հարթություններում: Դրա շնորհիվ գոլորշիացման մակերեսն զգալիորեն կմնեանա, և զրան համեմատ կավելանա գոլորշիացումը, այսինքն՝ ջրի լրացուցիչ մակերեսի յուրաքանչյուր 100 քառակուսի կիլոմետրին 11 մ³/վարչկ:

Յեթե այս ձեռվ զնահատեն ջրի առնասումը, այն ժամանակ միջոցների համեմատարար քիչ ծախսերով կարելի յե ստանալ 15000 կվթ, առանց եյտպես փոխելու ներկայումս յեղած ջրային բալանսը: Սակայն այդքան փոքր հղորությունը միայն տեղական նշանակություն կունենար: Այդ պատճառով Գանդրիլիսինի պլանը շատ ավելի հեռու յե տարածվում: Նա ուզում ե Հորդանան զետի ջուրը փակել Տիբերիֆական լճում, ինչպես նաև Մեռյալ ծովի մասցած հոսանքները հեռացնելու վորպեսզի այս ձեռվ վոռողվնն այն տարածությունները, վորոնք ներկայումս ջրի պակասությունից չեն կարող սպազործվել:

Դա հնաբավորություն կտար Միջերկրական ծովից ջրի հոսանքն այնքան զգալիորեն բարձրացնելու, վոր ուժակայանները կկարողանային տալ մոտավորապես 185000 կվթ: Վերջապես, հանդիսա կերպով կարելի յեր մի քանի տասնամյակ թույլ տալ, վոր ջրի հոսանքը գոլորշիացումից ավել լիներ: Այն ժամանակ Մեռյալ ծովի մակերևույթը յուրաքանչյուր տարի մի քիչ կրաքարանար, վորը վոչ վոքի չեր մասօք: իսկ սպասակար հզորությունը կրկնակի կավելանար: Վերջապես, հարկավոր ե ուշադրության առնել նաև այն, վոր Միջերկրական ծովին կից մարզերը բոլորովին միակը չեն այդպիսի պլանի կենսագործման համար, կան, բացի զրանից, գեռմա բազմաթիվ շրջաններ, որինակ՝ Կասպից ծովը (ծովի մակերևույթից 26 մ ցած), Սոմալիա ծովախորչի մոտ Ասսալ լիճը (-174 մ), Մահվան հովիտը (-84 մ) և Տուանուլլայի մոտի հովիտը (Toahulla) Չոր լճի հետ միասին (-90 մ) Միջա-

ցյալ Նահանգներում—սրանք բոլորը բավարարում են այն պայմաններին, վսրոնք անհրաժեշտ են եներգիա, ի այդպիսի ստացման համար։ Այստեղից հետևում է, վոր Դանդրիլիսնի նախադիմը մեծ ուշադրության և արժանի վորպես մուծանք ոպազանաշխարհային եներգուանտեսության մեջ։ Մանավանդ, յեթե պահեվելովայի նախազծի որինակով այս նախազիմը կապենք ներկայումս անբնակելի շոգ շրջաններում ներքին հղոր ծովեր ստեղծելու բնական իդեայի հետ այն բանի համար, վորպեսդի արմատապես փոխենք այնտեղի կլիման և անապահները դարձնենք պաղապետ հոգեր։

Ապազա եներգուանտեսությունը, անկառածած, անտեսական տեսակետից հաշվի յե առնելու այդպիսի շաղկապման հնաբավոր թյունը։

ԳԼՈՒԽ ՑԵՐՌՈՐԴ

ԱՐԴՅՈՒԹ ԴՈՅՉՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՇԻՆ ԱՓՆԱԿՈՆՈՒԹՅԱՆ
ԵՆԵՐԴԻԱՆ ՈԳՏԱԴՈՐԾՈՂ ԿԱՑԱՆԵՐ

Դրված խնդիրը լուծեկու համար տեխնիկան պետք է պատրաստի ունենա զանագան ուղիներ Ներկա գեղգում տեխնիկան հաշվի յև առնվում, զոր, բացի ածուխից և ջրալին եներգիայից, մեր մոլորակի վրա կան եներգիայի զանագան աղբյուրներ, այնպես վոր ամենից լավը—զա հաստատապես փորոշելն ե, թե վորակ ամենից ավելի շատ կարելի յև ստանալ ան: Տեսանելի պաշտամության կարելի յև արագործն աչքի անցկացնել. մի կողմ թողնենք ածուխը, նավթը, գետերն ու ջրվեժները, այն ժամանակ քննարկության համար կիմա հետևյալը՝ յերկրի վրա արևից ճառագայթող ջերմության անվերջ քանակությունը. տաքության հսկայական քանակությունը, վոր յերկիրը պահպանում է իր ընդհերթում. ոգային սվիխանոսում այն հոսանքները, վոր մենք քամի յենք անվանում. ծովերի ալիքները, վորոնք մռնչացող ափնակոծությամբ զարնվելով ափին փշրվում են. ծովերի մակարդակի մշտնշենական բարձրանալն ու ինչնելը շնորհիվ մակընթացության և տեղատվության, ծովի բարձրության պարբերական փոփոխությունները, վոր ստեղծվում են լուսնի ձգողականությամբ:

Արեգակնային ճառագայթները, քամիները և յերկրի ջերմությունն ավելի ուշ կզրադեցնեն մեր ուշադրությունը. Սկըրդում մի քանի խոսք ասենք ծովային ալիքների մասին: Նըանց եներգիայի պաշարն ամենից շատ վառ կերպով է հանդես գալիս այնակ, վորտեղ նըանք մռնչացող ափնակոծության ձևով զարնը-գում են ժայռոտ ափերին այնպիսի ուժով, զորք բավական և մեծ նավեր քշել-տաներու և խորտակելու համար: Այդպիսի ափնակոծության ալիքներում միանգամայն անհավատալի ուժեր են-

առաջանում: Անզվիացի Ստեփֆենսոնը փորձեց զրանք չափել և ժողովի շերտի 1 մ՝ վրա 15—35 և ճնշում դառավ: Ցերե այդ հաշվարկումը շարունակենք, ապա մենք կտեսնենք, վոր Ֆրանսիայի արևմտյան ծովափը, վորը հայտնի յեր ուժեղ ափնակոծությամբ, քամու մեկ պոսթկումի ժամանակ յենթարկվում և ալիքի հարվածի, վարի շարժման եներգիան համապատասխանում է 75 միջ կվա հզորության:


Սակայն այդպիսի թվերի վրա զարմանալը միաց չունի, վորովհետեւ նրանք տալիս են ակնթարթային նշանակություն և յերկար ժամանակամիջոցի համար զրանք հաշվի առնել չի կարելի: Նրանց առաջացումը չափազանց քամահ և ու անհաստատ: Այնտեղ, վորտեղ այսոր փոթորկի հարվածից խոռվանուրդ յեղած ալիքներն իրենց կատաղությամբ խորտակում են ամրարտակներն ու պատավարները, քշում-տանում են զյուդերը, այնտեղ վաղը, կարող և պատահել՝ խաղաղ յեղանակի գեղագում հանգարանքուն լինի:

Ցեղ հենց նույն ծովը, վորն այսոր իր ալիքների ճնշման տուկ ստիպում և ժայռոտ ափին դողալու, հետեւյալ որն արգել կարող և մեղ հրապարեն լսանալու:

Ալիքների խաղն ողտագործելու ամենամեծ խոչընդունան ել հենց այդ փոփոխականությունն եւ, վորովհետեւ եներգիայի ողտագործման կարևորագույն պայմանը տևականությունն ու անփոփոխությունն են:

Այնուամենայնիվ ալիքային շարժիչներ կառուցելու փորձերը միշտ կրկնվում եյին, նրանցից մեծ մասը շատ պրիմիտիվ են, վորովհետեւ նրանք սահմանափակվում են ամենասպարզ մտապրությամբ՝ ողտագործել բարձրացող և իշող լողակները: Այդ շարժումը լծակի ողնությամբ հաղորդվում և ատամնավոր անիվին և օղոմպին, վորոնց աշխատանքի հետևանքով վերին ջրավազանները լցվում ե ծովային ջրով: Բարձրացրած ջուրը շարժման մեջ ե դնում տուրբինը: Այսպիսով ստացվում ե ելեկտրական եներգիա: Ուրիշ գեղագում լողակի փոխարեն ուղում են սպատագործեն ուղղաձիգ կախված բոյեներ (խարսխանիչ լողաններ), վորոնք ալիքների հարվածներից տատանվում են վորովես ճոճանակները: Հառարակ լծակային մեխանիզմի միջոցով ստատանողական շարժումը հաղորդվում ե ողային կոմպրենորներին:

Այսպիսի յեղանակով ուղում են լցնել մեծ ուղերգվուարները



Նկ. 45. Ալիքային մշկայանի ամերիկական նոխազիճն ըստ բարձրի
սկզբանացի.

սեղմկած ոգով և այդ պաշարների ոգնությամբ շարժման մեջ զննել գններատորները:


Այս բոլորը թղթի վրա բավական իրական և հնչում, բայց մինչև այն ժամանակ, քանի գեռ չեն ձեռնարկում հաշվելու: Եներգիայի յուրաքանչյուր փոխարկում մի տեսակից մյուսի՝ կապված և եներգիայի վորոշ բաժին կլանելու հետ: Իսկ այսուեղ եներգիա մի քանի փոխարկումներ հետևում են մեկը մյուսին: Հետևանքը լինում է ոգտակար դործողության շատ աննշան զործակից (արգասիք): Յեթե դրան ավելացնենք եներգիայի ազդյուրի անհաստատությունը, ապա առանց հետադա դատապահոյունների պարզ կլինի ա: դպիսի առաջարկությունների անպետք լինելը: Այդ առաջարկությունների հեղինակները, ճիշտ ե, տում են, թե այլ քնների եներգիան առապառ ե ու անսահման, և այդ պատճառով ել բոլորովին նշանակություն չունի, յեթե ոգտակար դործողության զործակիցը փոքր ել Բացի այդ, այդպիսի տեղակայանքները հարկավոր ե քննության առնել շատ մեծ մասշատրով: Վորապես լողաններ կարելի , և ոգտազործել հին նավերի կը-մախչները, վորոնք խարիսխ զցած դյուժմիններով մեկը մյուսի մոտ կանգնում են ալիքների խիստ ափնակոծության վայրերում, վորապեսդի նրանց շարժուաը լուծանման հզոր լծակների միջնորդ փոխադրվի շարժիչ մեխանիզմի վրա: Իբրև, այդպիսի մեխանիզմը չափաղանց լավ եներգիա կտար: Սակայն, յեթե այդքան ընդարձակ պլաններ են կառուցվում, ապա յերեան և զայլին նորիազդի մի նոր թերությունը, գործվեան այսուեղ պահանջվում ե հաստատել ցամաքի հետ այնպիսի միացում, վորը միաժամանակ չլիներ չափաղանց մեծածավալ և այնուամենայնիվ կարողանար զիմանալ առաջացրող լարումին: Նկատի ունենալով այն անհավատալի ուժերը, վոր ստացվում են ալիքների ափնակոծությունից՝ համաձան Ստեֆինսոնի չափումների, հարկավոր և այդպիսի նախագծի իրականացումը համարել անիրազործելի:

Բայց ծովալին ալիքներից եներգիա ստանալու մի հնարավորություն ես կա: Դրա վրա յե հիմնվում ամերիկական նախադիր, վորը ներկայացրած և ծ-րդ նկարի վրա:

Դա այդ տեսակի վորոշ չափով միակ տեխնիկապես գրապետնախադիճն ե:

Այդ նախագիծը մեզ պարզելու համար, մենք պետք ե չարգըներ մի քանի լրացրուցիչ կշռադատումներ: Ամենից ավելի լավ ե սկսենք հանրածանոթ յերեսութից: Այն կարուկ հարվածը-

վոր հաճախ լսվում է, յերբ շատ արագ կերպով ծածկում ենք ջրմուղի ծորակը, առաջանում և նըանից, վոր ջրի միանդամբց կանգնեցրած շիթի եներդիան կարող և միայն արտահայտվել խոզավակի պատերին հասցըած հրումի ձևով։ Այդպիսի հրումը կարող և այնքան ուժեղ լինել, վոր խողովակը կպայթի, Բայց յեթե ջրմուղը ծորակից մոտիկ մի ճեղքվածք ունի, այն ժամանուել հրումը բոլորովին այլ կերպ կարտահայտվի, այսինքն՝ ծորակը փակելու պահին այդ ճեղքվածքի տեղում ջուրը խողովակից ցայտելու յերածքը չիթով։ Կարճ խորհրդածությունը հասցնում և այն բանին, վոր այդպիսի յերևույթը կարելի յերածութել ջուր բարձրացնելու համար Դա 100 տարուց ավել և, վոր հայտնի յերածությունը 1796 թ. Խոսիֆ Մոնդուֆիերը, այն յերկու յեղբայրներից մեկը, վորոնք առաջին սղապարիկին սահմանական բարձրանալ, այդ հիման վրա կառուցեցին ինքնուրույն աշխատող մի մեքենա, այսպես կոչված՝ բախտական ամրարձիչ, կամ հիդրավլիկական բարձրան, օրդենի նկարը սիեմատիկորեն ցույց և տալիս նրա կառուցվածքը։ Մեծ սեղերվուարից



Նկ. 6 Հիդրավլիկական բարձրական գործողություն սիեման։

սնվող բավական լայն խողովակն իր ներքին ծայրում փակված և կափարիչով։ V կափարիչի մասսան այնքան մեծ և, վոր ջրային անշարժ սյունի ճնշումը բավականաչափ մեծ չե, վորպեսզի նրան բարձրացնի։ Ուրեմն, կափարիչը բաց և նեռում, և ջուրը դուրս և հասում։ Մի վարոց ժամանակից հետո ջրի արագորեն շատացող հոսանքն այնքան կմնանա, վոր ջուրը կափարիչի մասսային քշի-կատանի զեպի վեր։ Դրա շնորհիվ կափարիչը փակվում և յեկը կալնում և Դրա հետևանքը կլինի ուժեղ հրումը

խոզսվակի մեջ, վորի շնորհիվ բացվում և Ն կափարիչը, վորը խոզսվակի պատի մեջն և գանգվում: Այդ անցքով ջրի մի մասը մեծ արագությամբ, այսինքն՝ մեծ ուժով կնեսվի դեպի Ա կաթուան: Դրա շնորհիվ այսաեղ ողբ սեղմանում և, և ջուրը քշվում և ուղղաձիգ կերպով դեպի վեր բարձրացող խոզսվակի մեջ: Ցնը այս յեղանակով հարվածն իր եներդիւան տվել և, Ն կափարիչը իր վրա տեղավորված ջրի ծանրության տակ փակվում և: Միաժամանակ բացվում և V կափարիչը, և որոցերը նորից և սկսվում: Այդ շաբունակում և մինչև այն ժամանակ, քանի զեռ V-ից դուրս թափվող ջուրը բավականաչափ մեծ ա, աղություն ունի: Ա կաթուան հավասարեցնում և ուղղաձիգ խողովակում ճնշման տառապելմանը, վորոնք առաջանում են շնորհիվ տեղակայում մի բախական աշխատանքի: Այդ պատճառով ջուրը հավասարաչափութեն դուրս և հոսում խողովակի վերին ժայրով:

Այս ցուցումների հիման վրա մենք հեշտությամբ կարող ենք հասկանալ օ-րդ նկարը: Խոզսվակը սննդոցող սեղնրվուարը փոխարինում և ծովին, իսկ հոսանքի անհրաժեշտ արագության հասնելու համար հարվակոր ջրա, ին ճնշումը առյին և տիֆնակոծությունը: Լողացող մեծ ձաղարները—դրանք ալիքներ բնուղներն են, վորոնք ալիքների հարվածները փոխակերպում են ուղղված հոսանքի: Այդ հոսանքի ստեղծած հարվածը բջում և ջուրը զեպի ամբարձիչ խողովակները, վորոնք այն առյին են բարձր տեղում տեղավորված լճակին: Այդ լճակից ջրի անկումը սննդը և հիդրավլիկական, կայանը սովորական սարքով: Այսպիսի կառուցվածքն ամենից ավելի իրադրծելի կլիներ իրականության մեջ: Ավելակոծության անհավասարաչափությունները հարվակում են շնորհիվ լճակի տակայության: Ցեմեն կարելի յե ջրի ժամանակարձման ու նրա ծախսի հարաբերության համար բավականաչափ մեծ տառապելմանը ընդունել, այն ժամանակ աեղակայումի մշտական աշխատանքը կարող և աղանովված լինել:

Այսուհեղ մնխանիկական դժվարություններն զդալի մասով վերանում են, վորովհետև բարդ հազորդիչ որդաններ չհան: ուրիշ հարց ե, թե վորքան կարծենան այդպիսի տեղակայումները, (Մենք կարող ենք ավելացնել, վոր ներկայումս Ֆրանսիայում Բիարրիցեյի փարոսի մոտ արդեն կառուցվում և փորձնական տեղակայում՝ ափնակոծության եներդիկան ոպտագործելու համար: Այդ տեղակայումն իրազործվում և ըստ ինժեներ Գրասուեյի նախագծի, վորը մի քիչ կատարազործել ենկարազրված սիստեմը (Եմք):


ՆՈՎԱՅԻՆ ՄԱԿՐՆԹԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ի ՍՊԱԾԱԿՈՒԹՅԱՆ

24 Ժամկա ընթացքում յերկիրը մի անդամ պտավում և իր առանցքի շուրջը և լուսնի նկատմամբ ամեն անդամ շրջվում և իր մտկերեսի մյուս մասով։ Մինչույն ժամանակ լուսինը իր ուղին և կատարում յերկիրի շուրջը լուսինը պահվում և իր ճանապարհի վրա յերկրի ձգողականության ազդեցության տակ։ Մյուս կողմից՝ յերկիրի վրա իր հերթին ազդում և նրա արքանյակի ձգողականության ուժը, Ամենից ավելի վառ կերպով այդ արքանայտվում և այնտեղ, վորանեղ յերկրի մակերեսը ծածկված և ծովերով, վորովհեան դյուրաշարժ ջուրը շատ ավելի ուժեղ կերպով և յենթաքվում լուսնի ձգողականությանը, քան թե պինդ ցամաքը։ 7-րդ նկարի վրա¹⁾ մենք տեսնում ենք այն յերեսությը, վորը հայտնի յե վորպիս մակընթացություններ և տեղատվություններ։ Ա կողմի վրա, վորը լուսնի ճիշտ դիմացն և, ծովը բարձրանում և, բայց նու բարձրանում և նաև հակազիր Ը կողմում։ Այսեղ լուսնի ձգողականության ուժն ավելի ուժեղ կերպով ազդում և ցամաքի վրա, վորը լուսնին ավելի մոտ և տեղավորված, այնպիս վոր ծովի հատակը վորոշ չափով ձգվում—քաշվում և նրա շվունների տակից։

Հետևանքն ստացվում և նույնը, ինչ վոր նաև Ա դեպքում։ Զուրը շտամում և, նա բարձրանում և, Շովի այդ բարձրացումը ցամաքի նկատմամբ՝ կոշվում և մակընթացություն։ Մակընթացության անհրաժեշտ լրացումը հանդիսանում և տեղատվու-

1) Պարզության համար 7-րդ նկարի վըս յենթազրված և, վոր ծովը ծածկում և ամրագլ յերկիրը։ Շովի խոկական հարաբերակցությունը ցամաքի նկատմամբ անհնարին և ներկայացնել այդպիսի փոքր ժամկանում։

թյանց Յ և Յ աեղերում, վորոնց Ա-ից և Շ-ից 90° հետո յեն գտնվում, չուրի իշխում ե, այս ժամանակի, յեր Ա-ի և Շ-ի ծավը բարձրանում ե Բայց վորովներն յերկիրն իր տառացքի շուրջը 24 ժամում մի անգամ ե պատվում, ուստի 6 ժամ հետո Ա-ի տեղը կլինի այնաեղ, վորտեղ այս ժամին Յ-ն և գտնվում: Ուրիշ խոսքով Ա-ն տեղատվություն կունենա: Բայց Յ-ն այդ ժամանակի ընթացքումնույնպես 90° տեղափոխվում ե և զրավում և Շ-ի տեղը, ուստի Յ-ում մակընթացություն կառաջանա: Ելի 6 ժամ հետո Ա-ն 180° շուրջ կզա, կնասնի Շ-ի տեղը, և այսպիսով Ա-ում նո-



Նկ. 7. Մակընթացությունների և տեղատվությունների առաջացման
սխեման:

ըից մակընթացություն կլինի: Այդ ժամանակ Յ-ն գտնվում և Շ-ի տեղում, վորտեղ նորից տեղատվություն կլինի: Ճիշտ նույնպես ել տեղափոխվում են Յ և Շ կետերը, ինչպես նաև յերկրի մակերեսի բոլոր մյուս կետերը: Դրանից հետեւմ ե, վոր ծովով ծածկված բոլոր տեղերում յուրաքանչյուր 24 ժամում յերկու անգամ մակընթացություն և յերկու անգամ տեղատվություն և լինում: Տեղատվությունն այս ե, վոր ջուրը հեռանում և ափից և բաց և անում ծովի հատակը, մակընթացությունը, ընդհակառակը՝ նորից ջրով ծածկվում և ափը, վորը տեղատվությունից բացվել եր:

Լուսնի պտույտը յերկրի շուրջը և յերկրի մակերեսույթի շամաքի և ծովի բաժանված լինելը հիմնականում չի փոխում մակընթացությունների և տեղատվությունների բնույթը: Ճիշտ ե, այդ հանգստանքներն առանձին զեղքերում վորոշ շեղումներ են ստեղծում: Այսպես, որինակ՝ Բալթիկ և Միջերկրական ծովերում, վորոնք ովկիանոսի հետ միացած են միայն նեղ նեղուցով, մակընթացություններն ու տեղատվությունները համարյա բացակայում են:

Ուրիշ տեղերում մակընթացության և տեղատվության միջև յեղած տարրերությունը նորմալ կերպով հաշվվում է 3 մետր։ Բայց կան ծովափեր, վորոնց ափի տեղադրությունն ու կտրվածքն տառնձնառեն նպաստում են մակընթացության ալիքների տառջանալուն, այնպես վոր նրանք հասնում են 10—12 մետր բարձրության։ Ցեմուպայում՝ Ֆրանսիայի արևմտյան ծովափը, Անգլիայի և Իրլանդիայի հարավ-արևմտյան ծովափն այդ բանի համար ունեն ամենից ավելի բարենպաստ պայմաններ, զյխապորապես ֆիորդանման ծովածոցին և յերկար, խոր գետարերաններում։ Այդպիսի տեղերում ամենամեծ մակընթացությունների ժամանակ¹⁾ առաջանում են մինչև 18 մետր բարձրության ջրային սարեր, վորոնք առող սրբնթացությամբ թափվում են ափի վրա, իսկ հետո նույն ավելի արագորեն նահանջում են դեպի ծովը։ Ամենամեծ մակընթացությունների ժամանակ ջրի վերելքը տևում է 5 ժամ, իսկ անկումը՝ 7,5 ժամ։ Նորմալ մակընթացության և տեղատվության դեպքում յուրաքանչյուրի համար կարելի յե ՅՇ/4 ժամ հաշվել։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ջրի այդպիսի հոկայական զանգվածի շարժումը պարունակում է եներգիայի անհավատալի պաշարներ, Նրա չափերը մոտավորապես հաշվելու վորձերը ցույց են տվել, վոր մակընթացություններն ու տեղատվությունները արեգակնային ճառաղայթումից հետո մեզ համար մատչելի եներգիայի աղբյուրներից ամենամեծն են, Եներգիայի այդ աղբյուրի տարեկան միջին կորությունը կարող է զնահատվել 8 տրիլիոն կվթ²⁾, —մի թիվ, վորը նույնիսկ պատկերացնելն անհնարին է, Դրա հետ համեմտած միանգամայն չնշին կթվատարեկան հզորության 750 միլ. կվթ, վորը մարդկությանը, ամենայն հավանականությամբ, 50 տարի հետո պետք կդա վորպես եներգիայի աղբյուր, Բայց այդ հարստության նկատմամբ գործը նույնապիսի վիճակումն է, ինչպես և ծովային ջրի վոսկու նկատ-

1) Ամենամեծ մակընթացություններն առաջանում են յուրինի լուսմին և նորին, վորովներու այդ ժամանակ արեք, վորը նույնապես վոցը մակընթացություններ և տեղատվություններ և առեղծում, ամենպացնաւմ և յուրինի ձգողական ազգեցներունը Ամենամեծ մակընթացության հակադրությունն և հանդիսանում ամենափեր մակընթացությունը, վորն առաջանում է այն ժամանակ, յերբ յուրինը զանգված և տառչին կամ վերջին բառորդաւմ։ Այդ դեպքում որին ողջեցներունը թուլացնեմ և յուրինի ձգողականը։

2) Մեկ տրիլիոնը հավատը և միլիոն քիլոների Մեկ տրիլիոնը հավատը և միլիոն միլիոնի Այսպիսով մեկ տրիլիոնը հավատը և 10¹³, իսկ բիլիոնը 2012, նմը։

մամբ, վլուկին կատ Յուրաքանչյուր խորանարդ կիլոմետրում
5000 կգ և գտնվում, բայց մենք նրան հանել չենք կարող, զու-
րովհետեւ վոսկին լուծված և և լուծույթի մեջ մասնատված և ան-
թիվ, անհամար մասերի, Նույն դրության մեջ և դործը նաև
մակընթացությունների և տեղատվությունների եներդիայի նը-
կատմամբ, Այդ եներդիան դոյլություն ունի, բայց նրան սպառ-
դործել կարելի յն միայն փաքը քանակությամբ, վլուկին և և
հներդիան ստանալու համար պետք և իննեն վորոշ պայմաններ,
յուրանք յերկրագնդի միայն վորոշ տեղերում են համընկնում:
Ծլյագոր դժվարությունը նրանու մեջ է, վար սպառդործման հա-
մար եներդիայի պիտանի քանակությունը շատ խիստ վիճույն-
վում է, Մակընթացության ժամանակ ջուրն սկսում և զանգա-
դորեն բարձրանալ, շարունակ ավելանալով, և օ ժամ հետո բա-
վական արադ կիրպով հասնում և իր սահմանային բարձրու-
թյանը, Դրանից հետո շուտով ջուրն սկսում և իննել՝ սկզբում
դանդաղ, հետո ավելի ու ավելի արագ, մինչև վոր, վերջապես, 6
ժամ հետո լինում և լրիվ տեղատվություն, վորից հետո նորից
սկսվում և մակընթացությունը:

Այդ 12-ժամյա տատանումները մի քիչ խախտվում են ա-
րեգակի վերաբերմամբ լուսնի ունեցած դիրքով. Վերջապես, կա-
րող և տեղի ունենալ քամու միջամտությունը, վորը, յեթե կփշի
մակընթացություն ժամանակ, կարող և առաջացնել անառելի
բարձր ալիքներ, այսինքն՝ կտացվի փոթորկային մակընթացու-
թյուն,

Մենք տեսնում ենք, վոր մակընթացություններն ու տե-
ղատվությունները կրկնվող, բայց վոչ յերրեք հավասարաչափ
յերկույթ են, իսկ ընության ուժերի արդյունաբերական սպառ-
դործման անհրաժեշտ պայմանն և հավասարաչափությունը, Մա-
կընթացություններին և տեղատվություններին այդ հավասարա-
չափությունը տալու համար պետք և մի մեծ ջրամբարում մա-
կընթացությունը փակել ամրաբուակի ողնությամբ: Այդպիսի
տեղակայութերում սպառդործվող հզորությունը պարզապես վո-
րոշվում է լակի մակերևույթով և ջրի միջին անկումով: Թանի
վոր անկումը չնչին է, ուստի մեծ հզորության համար անհրա-
ժեշտ են շատ մեծ մակերևույթներ: Այսպիսի հանգամանքներում
մակընթացային կայաններ կառուցելիս հենց սկզբից պետք և
դուրս գցել տափակ ծովեղը, վլուկին այդ գեղջում ստիպ-
ված կլինելինք ջրավազանը կառուցել կիսմետրեր ձգվող ամ-

բարտակի ողնությամբ և այդպիսի ամբարտակի կառուցումն անակելի թանձ կնատեք:

Բայց նաև ժայռոտ ծովեղը միշտ պիտանի չեւ Գործնականորեն կիրառելի յեն միայն այնպիսի տեղերը, վորտեղ հնարավորի չափ նեղ անցք ունեցող լայն ծովախորշերում բնությունը առաջացրել և ջրավագաններ, վորովհետեւ այսուղ անցքը վերջնականապես փակելու համար համեմատարար կարճ ամբարտակ պետք էլլինի, նոր ծովածցերը նույնպես բավարարում են մեր պայմաններին: Այսանդ խոշընդուռ և հանդիմանում այն, վոր շատ դեպքերում անհրաժեշտ և զողենապինը համար ճանապարհ թողնել, վորովհետեւ մեծ շլյուզները չափից ավելի կթանկացնելին կտուցումը կարևոր և ես այն, վոր ջրավագանը կարողանա շտատ արագ կերպով լցվել ու դատարկվել, վորովեսպի ներքին մակարդակի փոփոխությունը կարողանա կատարվել նույն աեմպով, ինչպես վոր արագագինը: Սակայն այդ պահանջին հակասում եւ այն հանգամանքը, վոր ամբարտակի ամրության նկատառութեարագ ամբարտակի մեջ կարելի յեւ միայն սահմանափակ թվով ջրամուզ անցքեր կառուցել: Իսկ այդ անցքերն անհրաժեշտ են տուրբինների շահագործման համար: Բայց զործնականում այդ անրավարար և լինում, վորովհետեւ տուրբինները կարող են կլանել միայն ջրի սահմանափակ քանակություն, և անհրաժեշտ եւ ավելուրդ ջրի համար կառուցել լրացուցիչ իջուցիչներ (ՕՊՍԵԿ), վերջապես, հարկավոր և հնարավորություն ունենալ շարունակելու կայանների աշխատանքը նաև այն ժամանակաշրջաններում, յերբ տուրբինները չեն կարողանում աշխատել՝ ջրի ճնշումը վորոշ նվազագույն սահմանից ավելի ցած իջնելու պատճառով: Ջրի ժակարդակների փոքր տարրերության այդպիսի ժամանակամիջոցները մակընթացությունների և տեղատվությունների 12,5 ժամ տևող ցիկլից միջին հաշվով գրավում են 2-ից մինչև 3 ժամ: Այդ ժամանակամիջոցը ծածկելու համար կան զանազան հնարավորություններ, այն եւ յերկրորդ պահեստի ջրավագանը, պոմպային կայանի կամ շողենպահեստի հետ միացումը: Բայց այդպիսի ոժանգակ կառուցութեարը թանկ են, վորովհետեւ նրանք պետք են կատարի առնվին զլխավոր տեղակայութեարը լիովին փոխարինելու համար: Հետեւարար, ըստ զործի եյտության պետք ել յերկու կայան կառուցել: Այդ անհրաժեշտությունը խիստ մեծացնում է կառուցման արժեքը:

Մենք տեսնում ենք, վոր մակընթացությունների և տե-

դասպությունների եններգիայի ոգտազործումը բոլորովին հեշտ
խնդիր չեւ Բայց, չնայած դրան, հաղիկ թե մի վորևս ուրիշ
խնդիր պատմության ընթացքում այդքան շատ մասնավետներ
ու վոչ մասնագետներ եւ զրավելու Մակընթացությունների եններ-
գիայի կիրառման մասին յեղած մեզ հայտնի առաջին առաջար-
կությունները հասնում են մինչև **XX** դարը. Դրանից հետո տըլ-
յալ հարցի վերաբերյալ զրականությունը անսահմանորեն աճեց,
Բայց ամենակարևորն՝ այդ այն եւ, վոր միշտ փորձեր եյին ար-
վում այդ իդեան իրազործել սկզբում, անշուշտ, շատ փոքր
մասշարով, չմակընթացային աղացը շարժող պարզ ջրանիվի
ողնությամբ. Մեր ժամանակին բաժին ընկավ այսուհեղ ևս կա-
տարելու մեծ գործ. Անզիփան, Ֆրանսիան, Արգենտինան եւ, ի
հարկե, ԱՄՆ-ը լուրջ կերպով զրադվեցին այդպիսի նախազերով,
վորոնք առանձին գեղքերում իրաք հսկայական չափեր ունեն,
Համաշխարհային պատերազմից առաջ Գերմանիան նույնպես
գտնվում եր այդ յերկրների շարժում, վորովհետեւ 1910 թ. Համ-
րութզի մի ինժեներ՝ Յե. Ֆ. Պայնեն ուզում եր մակընթացային
ելեկտրոկայան կառուցել Հուզումի (Խաչատուր) մոտ Գերմանական
ծովի վրա. Այդ նախազիծն առաջին փորձն եր ժամանակակից
միջոցներով լուծելու մակընթացությունների և տեղատափություն-
ների եներդիայի ողափորձման պրորլեմը. Բնական պայման-
ները բարենպաստ եյին—ընտակից յերեք կողմերը կային, այն եւ
Նորդշարանդ կղզին, դիմացի ցամաքը և դրանք միացնող 2800
մետր յերկարություն ունեցող յերկաթուղալիքը. Ընդհանրապես
այդ նախազիծը բավական համեստ չափեր ուներ, Կայանի հզո-
րություններ կազմելու յեր միայն 5500 կլի. Բայց դա այնուա-
մենայիդ սկիզբն եր. Ստացված փորձը շատ շատ թույլ կտար
գնալ ել ավելի հեռու. Դժբախտաբար, Յ տարի զնաց անսպուտ
վեճերի վրա, Վերջապես 1913 թվին շինեցին մի փոքր փորձնա-
կան կայան. Նրա համար, վորպեսզի գործնականում լուծվին վի-
ճելի հարցերը, Լավ արդյունք ստացվեց. Պայնեյի բոլոր նախա-
պուշտակութերը կատարվեցին, Նախազի իրազործութեա արդեն
ապահովված եր Բվում, յերբ բռնկվեց համաշխարհային պատե-
րազմը. Փորձերը զարգացեցին, և փորձնական ստրօը քանդեցին.
Այն ժամանակվանից վոչինչ չեր լավում այդ պլանների մասին:


Այդ հասկանալի յեւ, վորովհետեւ խոչըր կայանի համար Գեր-
մանական ծովի ափն իր համեմատաբար փոքր մակընթացու-
թյամբ անպետք եւ, իսկ գործնականորեն հենց այդ տեսակի տե-

գակայումների համար ամեն ինչ խռովում և մեծ և նույնիսկ շատ մեծ կայանների կառուցման ոպտին։ Դրա համար հոյակապ պայմաններ գուռթյուն ունեն ֆրանսիական և անգլիական ծովափերում։ Յերկու յերկներում տրդեն վաղուց կառավարությունները մեծ ուշազրույթուն երին դարձնում մակընթացությունների և տեղատվությունների ողբորլեմի վրա։ Մի քանի տարի առաջ՝ Աբերգրախի մոտ (Aberystwyth) Դիուրիսի գետաբերանում Ֆրանսիան կառուցեց 1800 կիլոմետրական կայան, զորք չը անկման ու բարձրացման 12,5 ժամ տևող ժամանակի ընթացքում միջին հաշվով 10 ժամ և աշխատում։ Զրի մակարդակների փոքր տարբերության ժամանակ հոսանքի մատակարարության իր վրա յե վերցնում ոժանդակ կայանը, զորք տեղափորված և ծ-բդ կմ վրա հոսանքով դեպի վեր։ Այդ պոմպային կայանը, վորն իր տուրքիններում ոգտագործում և պատվարված Դիուրիսի գետի ջրի անկումը, բացի դրանից ունի յերեք մեծ պոմպ, վորոնք շարժման մեջ են դրվում մակընթացային կայանի ազատ հներգիայով։

Այսպիսով՝ այն ժամանակ, յերբ ոժանդակ կայանը չի աշխատում, նրա տուրքինների ոգտագործած ջուրը, ընկնելով պահասաի ջրավագանը, պոմպերի միջոցով նորից լցվում և վերին ջրավագանը՝ հներգիայի պաշարը վերականգնելու համար։ Յերկու կայանները միացված են 30 կմ բարձր լարվածության դժին, վորն եներգիա յե հաջորդում Բրեստին, վորտեղ այդ եներգիան տրվում և զինանոցին և կառավարական ուրիշ ձեռնարկների։

Դեռևս պարզված չե, թե արզյոք կարելի կլինի մի վորոշ ժամանակից հետո այդ նախադիճն ոգտագործել մեծ մասշտաբով, համապատասխան նախագծեր, ճիշտ ե, հենց Ֆրանսիայում բավականաշափ կան, բայց, ըստ յերևույթին, մինչև այժմ նրանցից վոչ մեկը լրջորեն ուսումնասիրված չե։ Անգլիայում ճանապարհների հաղորդակցության մինիստրը մի քանի տարի առաջ՝ հրապարակեց Սեփերնի գետաբերանի մոտ, Բրիստոլի ջրանցքում կառուցվելիք կայանի կառուցման պլանը, վորն աշխատելու յե մակընթացության և տեղատվության եներգիայի հաշվին և տալու յե միջին հաշվով 370000 կվա. Խնչակե ցույց և տալիս 8-բդ նկարը, Բրիստոլի ջրանցքն առաջացնում և գիրդանման ծովախորը, վորն այն տեղում, վորտեղ պետք լինի ամբարտակը, հասնում և Յ կմ լայնության Մակընթացության և տեղատվության աղղեցությունն այդ տեղում չատ ուժեղ ե։ Ամենաթույլ մակըն-


Հայութած քաղաքի համար
Հայութած քաղաքի համար
Հայութած քաղաքի համար
Հայութած քաղաքի համար



Անձունի մասունք

թացության ժամանակ նրա ալիքներն արևուամենայինիվ հաս-
նում են 9 մետր բարձրության։ Ափերը շատ զահավիճորեն են
իջնում գեղի ծովը, իսկ գեղի յերկրի ներսի մասը՝ թեթև զա-
ռիվայրով։ Դրա շնորհիվ հեշտանում եւ ամբարտակի հառուցումը,
վորը պետք է ունենա և կմ յերկարություն և 70 կմ՝ տարա-
ծությամբ ջրավագան տուաջնին։ Իր վերին մասում ծովածոցը
միաժամանակ հետպահանար մեծ նավահանդիսութ, վորը կարող է
լավ ողջադրժել հարևան արդյունաբերական շրջանի հողմից,
Այսպիսով այդ նախադին արմերի մի մասն ընկնում եւ նավա-
հանդատի և մուտքի մոտի մեծ շլյուզի կառուցման վրա։ Միև-
նույնը կարելի յեւ ասել Սևվերն զետք վրայով անցնելիք վաղուց
ծրադրվող յերկաթուղային համար ըջի մասին, վորը կարելի կլինի
կառուցնել այս նախադին իրադեմնու զետքում։ Ընդհանուր
տեղակայումի պատկերը ներկայացված և Զ-րդ նկարի վրա։ Ա-
ռաջին պլանում տեսնում ենք հզոր ամբարտակի, վորը ծովից
կարում եւ անդակայումը. այդ ամբարտակի հիմքը հարմարեց-
ված և ծովի հասակի բնական դիքքին Բաղմաթիվ անցքերը
(շլյուզների վահանակները) կարող են արագ կերպով բացվել ու
փակվել¹) Ելեկաբական հաղորդակեների ողջությամբ։ Ամբարտակի
հետառամ գանձում եւ յերկաթուղային կամուրջի աշխատանքին, Ելեկաբական
եներգիա ստանալու մերենաները տեղափորված են ամբարտակի
ներսում (նկ. 9), ընդ վորում յուրաքանչյուր շլյուզին հանում ե
մեկ ազրեղատ, վորը կազմված է տուրբինից և զեներատորից,
1300 կվէ միջին հզորությամբ։ Ենթադրվում է 280 այգպիսի
խումբ սարքել, գրանից ամրող կառուցվածքի միջին հզորու-
թյունը հավասարվում է 370000 կվէ։ Անփոփօն մակարդակի ժա-
մանակամիջոցները այստեղ նույնպես յուրաքանչյուր մակըն-
թացության և անդամավության ընթացքում տեսում են միջին
հաշվով 2,5 ժամ։ Այստեղից բղխող ընկական ընդմիջութերը մե-

1) Վահանակ ասեազ տեխնիկայում հասկանում են այն յերկաթն յեր-
տք, վորը վեր ու վար և սահման կողմէ յերկու փորտիներում։ Աղջպիսի վա-
հանակների ողջությամբ ըստ օանկանքան կարելի յեւ ամբողջովին կամ մաս-
նակիրն փակել լըրանզի անցքերը։ Մեծ ամբարտակների վահանակների
տեղափոխությունը կատարվում է ելեկաբակայիշների ողջությամբ։



故人不以爲子也。故曰：「子之不孝，無比於人。」

ըենաների աշխատանքում ծածկելու համար նախազիծը, 8-րդ նկարի համաձայն, կանխատեսում և Ցինտերնի մոտ ելեկտրական պոմպային կայան, վորոն Ուայ գետի հովտում ունի պոմպային սարքերով լցող ջնակ և աղբեղատներ, վորոնցցից ամեն մեկն ունի 13000 կվթ և կազմված է տուրբինից, կենտրոնախույս պամպից և գեներատորից:

Գևսերատուրները գիշերվա ընթացքում, մակընթացուին կայանի ավելորդ ռներդիայով, պետք և աշխատեն վորպես ելեկտրաշարժիչներ և այսպիսով շարժման մեջ դնեն կենտրոնախույս պոմպերը, վորոնք լճակի մեջ են լցնում Ուայ գետի ջուրը, Այդ ջրով ուղղում եյին սննել ոժանդակ կայանը, վորը նույնպես կառուցվելու յու 370000 կվթ հորությամբ և մեքենաների պարապուրդի ժամանակ պետք է փոխարիներ զլիսավոր տեղակայումին, Սակայն, ներկայումս, ըստ յերեսութիւն, այդ ժամանակությունից հրաժարվեցին: Այս նախազիծն Անգլիայում յենթարկից խիստ քննադատության, վորոն սուրդված եր զլիսավոր բարպես նրա արժեքի գեմ, վորովհետև ցույց տրված 30 միլիոն ֆունտ ստերլինզի գումարը անբավարար ճանաչվեց: Բացի դրանից, քննադատության յենթարկվեցին առանձին տեխնիկական հարցեր: Ի միջի այլոց, մատնաշվում եր, վոր այդպիսի հսկայական նախազիծի վերաբերյալ աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ են հիմնավոր հետազոտութեար ընդհանրապես մակընթացությունների և մատնաշվում միացավ այդ կարծիքին, Նախնական հետազոտութեար կատարելու համար 1930 թվին Սեմերն գետի վրա շինեցին մի փոքրիկ փորձնական կայան, բայց վերին իրեն ուղերձ ծառայում և վոչ թե պոմպային կայանը, այլ ոժանդակ կայանը, վորովհ շոգեկաթսան ելեկտրականությամբ առաջացնելու համար ողտազործվում են եներգիայի ավելցուկները: Մասցած շոգին ուղղվում է յերեսության կորուսաներից պաշտպանված մեծ ուղերձվուարը և պահպամ այդ շոգեկուտակիչի մեջ, վորը սննուցում է շոգետարրինը զլիսավոր կայանի կանգ առնելու ժամանակ: Այդ տուրբինը շարժման մեջ և դնում գեներատորը, յերբ մակընթացային տուրբինն անբավարար ճնշման պատճեռով չի կարողանում աշխատել:

Մենք տեսնում ենք, վոր գա միանգամայն պարզ և միա-

ժամտնակ խիստ հետաքրքրական իդեա յեւ Ցեղե գործնականում այն արդարանա, ապա մակընթացությունների ռդատագործան պրոբլեմը զործնականորեն նշանակալի չափով առաջ կը շարժվի:

Մակընթացային կայտնների մեացած նախադերից կարելի յեւ հիշատակել նաև մեկը, Առաջին՝ նրա մեծության շնորհիվ, յերկրորդ՝ այն բանի չառոճիվ, վոր միջադղային Ա եներգետիկ կոնֆերենցիալում (Բերլին, 1930 թ.) այդ նախազիծն աշխույժ վիճարանություն առաջացրեց: Այդ նախազիծը մշակել եր արգենտինական կառավարության ինժենիերական հանձնաժողովը, հետապնդելով մի նպատակ, այն և՝ վատելանյութով աղքատ յերկրի համար ածուխի թանկ ներմուծումը տնտեսել: Արգենտինայի ծովափը բարենպաստ նախադրյալներ ունի մակընթացային կայաններ կառուցելու համար: Բարձր և ցածր կանգնած ջրի միջև յեղած տարրերությունը հասնում է մինչև 12 մետրի, իսկ Բարենից հարավ մինչև Մադելանի նեղուցը անդավորված են շատ զետարերաններ և ծովախորշեր, վորոնց հետ և ամրարտակներով պատվարեն:

Հստ մինչև այժմ կատարված հետազոտությունների ամենից ավելի պիտանի յեւ Սան-Ժոզեյի ծովախորշը, վորի գիրքադրությունը ցույց է տրված 9 նկարի քարտեզի վրա: Այդ ծովախորշը բանում է մի տարածություն, վորը հավասար է 780 կմ², իսկ ամենախոր տեղը հասնում է 55 մետրի: Վորովհետեւ մուտքը նեղ է, ուստի, չնայած ծովախորշի մեծ մակերնուին, ջրաբանողի համար 7 կմ յերկարությամբ ամրաբարձր բավական աւ Շողենավերի համար շլյուզներ հարկավոր չեն, վօրովհետեւ հարեան նոր-Շովախորշը նույն առավինյա շերտու և սպասարկում: Ամրաբարձր պետք է շինովի ծուլաբետոնից և ջրի ամենաշաբաթ մակարդակից 2 մետր ավելի բարձր լինի: Ներսում, զանազան կայտաներում դռնավում են գեներատորները, տուրբինները, վահանակները և անհրաժեշտ արենատանոցները: Առանձին շենքերի պատերը ծովի կողմից պետք է լինեն 14 մետր հաստությամբ, իսկ հակադիր կողմից՝ 4 մետր: Թթվակարը ցույց է տալիս, թե մեացած բաներում ինչպես մնալ պատկերացնենք այդ տեղակառում: Համերաներում դրված են մեկական տուրբիններ, վորոնց յերկու կողմում կան սնուցող և դուրս տանող խողովակներ:

Բոլոր չորս խողովակները կարող են փակվել ելեկտրականությամբ բանող վահանակներով: Կիրառվելու յեն ուղղաձիգ

զլաններ ունեցող հորիզոնական առւրբինները։ Դլանի վերին ծայրում դանդում և զեներատորը։ Զուրը սնուցող խողովակով վերեցից աւզգահայաց կերպով թափում և տուրբինի մնջ։ Այսպիսով, զեներատորի հետ միացված առւրբինի սուսորը շարունակ պարտվում և մի կողմի վրա, անկախ այն բանից, թե արդյոք ջուրն այսուղե թափում և ժակընթացության ժամանակ բաց ծովից, թե տեղատվության ժամանակ ծովախորչից։ Տուրբինները կառուցված են այնպես, վոր նիանը սկսում են աշխատել միայն վերի և ցածի մակարդակների միջև 50 սմ տարրերության դիպում և ամենամեծ հզորությունը զարդացնում են մակարդակների 1 մետր տարրերության զենքում։ Դրա համեմատ ջրի հոսանքը կանոնավորվում և ավտոմատիկ հակառակիչներով (Ճրուսելք-ՄԻ)։ Ուրիշ խոսքով, ջրի առառության դեպքում տուրբինները ճիշտ այնքան են կանում, վորքան վոր անհրաժեշտ և նրա համար, վորպեսզի ծովի և ծովախորչի միջև մակարդակների ամենից ամելի սպառմեա տարրերությունը վորքան կարելի յե ավելի յերկար մաս։ Այդ հակառակությունը, սակայն, հասցնում է այն բանին, վոր ջրի կլանումը բոլոր 376 տուրբինների կողմից, վորոնք տեղափորված են ամրաբառակի 7 կմ ի երկարության վրա, անբավարար ե լինում յուրաքանչյուր՝ մակընթացության և տեղատվության ընթացքում հավասարեցնելու ծովի և ծովախորչի մակարդակները։ Վորոնքունքի մակարդակների այդ հավասարեցումն այնուամենայնիվ կատարվի, յուրաքանչյուր մաքնացության ու տեղատվության վերջանալուց քիչ առաջ ավելիորդ ջուրը բաց և թողնված ներքի խողովակներով անմիջականորեն՝ մի կողմ թողնելով տուրբինները։ Դրա հետ կապված ե ներծծող գործողությունը, վորը համապատասխանութեն մեծացնում և տուրբինի սպառակար դործողության զարծակիցը։

Նշված կշռապետութեանը հիման վրա հեշտ և հասկանալ մակընթացային կաւանների աշխատանքը, Յենթաղընը, թե անդապությունը մոտենում և իր վախճանին Բալոր վահանակները բաց են, բայց տուրբինները չեն աշխատում, վոր-վհեան ամրաբառի յերկու կողմում ջուրը միննույն մակարդակի վրա յե կանգնած։ Մակընթացությունն սկսվում եւ Ըստ աղդանշանի բոլոր վահանակները փակվում են։ Դրա հետևանքով ամրաբառի կապի ծովը նայող կողմից ջուրը բարձրանում եւ, այն ժամանակ, յերբ ջրավագանուս ջուրն առայժմ պահպանում է տեղատվության մակարդակը։ Հենց վոր մակարդակների տարրերու-

թյունը կհասնի 50 մմ (փոքր բավական և տուրբինի աշխատանքի համար), բաց են անում և և և վահանակները, Դրա չնորհիվ տուրբինային կամերաները միանում են ծովի հետ, իսկ բաց թռղներու կամերաները՝ ջրավագանի հետ, Հետևապես՝ մակընթացության ջուրն ամբարտակի միջով ձգտում է դեպի ջրավագանը, և բոլոր մեքենաներն սկսում են աշխատել, Այդ ժամանակի ընթացքում ծովում ջուրը շարունակվում է բարձրանալ, բայց ջուրը մինչույն տեմպով բարձրանում է նաև ամբարտակի մյուս կողմում մինչև այն մասնաւոր, բանի դեռ տուրբինի հզորությունը չի հասել ամենաբարձր կետին, Դրանից հետո ներս թողնող կանոնավորիչներն սկսում են բաց թռղնել ջրի միայն այնպիսի քանակություն, վորքի գեղագում ջրի ներքին և արտաքին մակարդակների միջև յեղած ամենից ավելի ողտավետ 1 մետրանոց ճնշումն ամբողջ ժամանակ պահպանվում է: Այդ ճնշշումով մեքենաները շարունակում են աշխատել այնքան ժամանակ, մինչև վորք մակընթացությունը կհասնի ամենամեծ բարձրությանը: Այժմ, մակընթացության վերջին ավելացումն ողտագործելու համար, բաց են անում օ վահանակները, Այն ժամանակ գուրս թողնող կամերաների միջոցով ջրավագանը միացվում է ծովի հետ և ջրի արտաքին ու ներքին մակարդակների միջև յեղած տարրերությունը բավական արագորեն հարթվում է: Տուրբինները շարունակում են աշխատել այնքան ժամանակ, բանի դեռ մակարդակների տարրերությունը 50 մմ ավելի շատ է: Այդ գեղագում հզորությունը նույնիսկ ավելի շատ կլինի, քան սկզբում, վորովիետն այդ շրջանում վորպես լրացուցիչ հզորություն յերևան և զայխս ջրի հոսանքի վերևում հիշված ներձնող ազգեցությունը: Սակայն զբանից քիչ ողուտ և ստացվում, վորովիետն շուտով մակարդակների տարրերությունը կանգնառում էն, դագարեցնելով ջրի մուտքը և փակելով ա վահանակը: Նուտով ամբարտակի յերկու կողմում ջրի մակարդակը հավասարվում է: Այսպիսով սկսվում է առաջին պարապուրզը, վորք միջին հաշվով 1 $\frac{1}{4}$ ժամ և անում: Այժմ փակում են նաև և և վահանակները և սպասում, մինչև վորքաղացության շնորհիվ ջուրը ծովում 50 մմ իշնում է: Այն ժամանակ աշխատանքը նորից սկսվում է: Դրա համար բաց են անում և և վահանակները: Ջուրը առըցքինային կամերաներով ջրավագանից հոսում և գեպի ծովը: Այսպիսով տուրբինները

Տ. Ժամկա ընթացքում նորից աշխատում են, Այդ ժամանակը լրա-
նալուց քիչ առաջ գտնվում է պահանակները բաց անելով հրավագանը
միացվում և անմիջականորեն ծովի հետ և բոլորովին դատարկ-
վում է Սկսվում և մեջենաների յերկրորդ պարագուրդը, վորը
նույնական է¹³⁾, ժամ և անում, հետո կրկին վրա յե համում
մակընթացությունը, և ամրագջ պրոցեսն սկսվում և սկզբից:
Միանգամայն ակներն են, վոր այդպիսի տեղակայումի մեջ ջրի
հոկայական դանդվաճները հետ ու առաջ են տեղափոխվում:
Բայց և այնպես, հետո վոր սկսում են հաշվել, ստանում են թը-
քեր, վորոնք ապշեցնում են իրենց չափերով: Սան-Ծագեյի տե-
ղակայումի մեջ ջրի մակարդակը ծովախորշում յուրաքանչյուր
մակընթացության ու տեղատվության ընթացքում միջին հաշվավ
2,6 մ պետք է բարձրանա և իշխի, 780 կմ² մակերեսույթի վեց-
քում գուրս և զալիս, վոր յուրաքանչյուր մակընթացության և
տեղատվության ժամանակը ամրարտակի վահանակներով փակվող
շրջապահությունը և հոսի 2 միլիմետր մ³ ջնուր: Ջրի այդպիսի մի
հոսանքի տիրապետելու համար անհրաժեշտ և ունենալ 8—10
մետր տրամագծով տանող ու բերող խողովակներ: 376 մետրնա-
յական աղբեղատները, վորոնք մեկը-մյուսից մաս 10 մ հեռավո-
րության վրա դասավորված են 7000 մետր յերկարություն ու-
նեցող ամրարտակի յերկարությամբ, մեկ մետրանոց հնչման
դեպքում տալիս են ընդամենը 750000 կվտ, իսկ 50 ոմ հնչման
դեպքում գետ ելի 300000 կվտ: Դրանից ստացվում է ամեն որ
1,5 միլ. կվտժ, ուրը կարող է կրկնակի ավելանալ ամենամեծ մա-
կընթացությունների գեպքում: Ցեղելով նվազագույն հզորու-
թյուննից, յեթե հաշվենք տարեկան արտադրանքը, տպա մենք կստա-
նանք մոտավորապես 5,5 միլիարդ կվտժ, թե ինչ և նշանակում
այս, ավելի լավ կարող ենք մեր պատկերացնել, յեթե զիտենանք,
վոր Նվեյցարիայի բոլոր հիգրաելեկտրոկայանները 1929 թ. տվել
են 5,52 միլիարդ կվտժ, ընդ վորում Նվեյցարիան պատկանում է
և լեկտրոններգիայի համեմատարար ամենամեծ սպառում ունեցող
յերկրների թվին: Արգենտինա հանրապետությունը մի քանի
միլիոն տոնն ածուխ կտնտեսեր, յեթե նա կարողանար, ոգտու-
ուրծելով մակընթացություններն ու տեղատվությունները, ամեն
որ արտադրել եներգիայի այդպիսի քանակություն:

Այսպիսով, վոչ մի կասկած չկա, վոր մակընթացություն-

Ների և տեղատվությունների ոգտագործման պլառլեմն ամեն ահղ մշակվում է Հավանութեն հաջորդ տասնամյակում մենք կտեսնենք արգեն մեծ մակընթացային կարանների յերեան դալրս իսկ 100 տարի հետո բոլոր հարմար ծովախորշերն ոգտագործվելու յեն։ Շատ յերկրներում ովկիանոսի ափն այն ժամանակ կլինի եներդիայի մատակարարման կենտրոն։

ԱՏՐԿԱՑՎԱԾ ՑԻԿԼՈՆԵՐԸ

Մենք հենց նոր վիթխարի ու անհավատալի անվանեցինք եներգիայի այն պաշարները, զոր մարդկությունն ունի մակընթացությունների և աեղատվությունների մեջ:

Անհամեմատ Էլ ավելի շատ և գուրս գալիս չոպտագործված այն եներգիան, զոր գտնվում է արեգակնային ճառաղավարութներում, չնայած այն բանին, վեր մեր մոլորակն ստանում է արեգակնային լիուկատար ճառաղայթման ընդամենը մոտավորապես $1/25000000$ մար. Որինակ՝ Սահարայի շրջաններում հորիզոնական մակերեսի 4 մ^2 վրա ամեն տարի թափվում են ջերմության այնպիսի քանակությունն, զորը համապատասխանում է մինչև 0, 75 կվթ հզորության: Հետեւարար, յեթե ոգտագործվի ստացվող արեգակնային եներգիայի միայն $10\%_0$ -ը, հաշվի առնելով զիշերային ժամանակը և ավելի պակաս ջող որերը, ապա Սահարայի 1 կմ² մակերեսույթից կարելի յետքող տարվա ընթացքում ստանալ 187000 կիլովատից վոչ պակաս:

Եեթե հաշվենք, զոր ելեկտրոներգիայի համաշխարհային սպառումը յուրաքանչյուր 20 տարում կրկնապատկվում է, ապա 1970 թվին համաշխարհային պահանջը հավանութեն կհավասարվի 750 մբլ. կվթ, Եներգիայի այդ քանակությունը ծածկելու համար արեգակնային եներգիայի $10\%_0$ -ը ոգտագործելու դեպքում, Սահարայի մակերեսույթի միայն 40000 կմ² պիաք կզար, այնինչ ամբողջ Սահարան 150 անգամ ավելի մեծ է: Այսպիսով, յեթե միայն հաջողվի օգտագործել արևի եներգիան, մի հարգվածով կլուծվի մարդկության եներգետիկ պրոբլեմը:

Այդ նպատակին հասնելու փորձերը կրկնվել են բազմիցս: Մինչև այժմ նրանցից վոչ մեկը չի հասցրել հարկավոր արդյունք-

ների, վորովնեանք նրանք բոլորը ձեռնարկվել են վոչ պիտանի
 միջնորդավի Անիմաստ և հոկայական հայելիներ և բարդ գոլոր-
 շիցնողներ կառուցել նրա համար, վորպիսպի վերջին հաշվով 35
 կվա ստացվի: Ամենից առաջ հարկավոր և ձեռք քաշել այն ավան-
 դական հայացքներից, թե ջերմային ու ելեկարական եներզիայի
 միջն միջնորդն անպայման պետք և լինի շոգեկաթան: Ողոտա-
 կար և, յերբ ջերմությունը կարող և ոգտագործելու խտացրած ձե-
 զով, ինչպես ածուխի մեջ, այլ վոչ թե մեծ մակերևույթների
 վրա ցըված վիճակում, ինչպես արեի ջերմությունը: Այդ ջեր-
 մությունն ոգտագործելու համար պետք և իրրեն հիմք վերցնել
 բնությունը: Գանդըրիլիոնը ցույց տվեց մի հանապարհ, վորը սա-
 կայն ամեն տեղ կիրառելի չեւ: Բոլորովին ուրիշ ճանապարհ նշեց
 ներնարդ Դյուրոն (Dybos), վորի նախագիծը վագնվորեց Փարիզի
 գիտությունների Ակադեմիային՝ Հյուսիսային Աֆրիկայում ածու-
 խի պակասության պատճառով: Մեկ խոսքով այդ ճանապիծը կա-
 րելի յէ հետեւյալ կերպ բնորոշել՝ արեի ջերմությունն ոգտագոր-
 ծելու համար իրական միջոց և հանդիսանում քամին: Այս վորովես
 պարագոր և հնչումներա համար, ով ծանոթ և ողի հոսանքն ող-
 տագործելու ապարդյուն փորձերի մեծ թվի հետ¹⁾, Քամինների փոփ-
 խականությունը, ինչպես յերևում և խոշոր եներզիա մատակարար-
 ման համար ամենավատ հիմքն և հանդիսանում: Բայց Դյուրոն
 չի ել մատածում ողի բնական հոսանքների մասին: Մինչդեռ Գանդ-
 րիլիոնն ուզում և արեի ողնությամբ արհետական ջրվեժներ
 ստեղծել, Դյուրոն ուզում և արեի ողնությամբ ստեղծել ողի
 ուզրաձիգ վեր բարձրացող մըրկանման հոսանքներ: Լանգ, թե
 այդ մասին ինչ կարող և ասել ինքը զյուտարարը:

Յեթե մենք կարողանայինք մեկ վայրկանով ողը վերածել
 ջրի և այդպիսով նրան գարձնել տեսանելի, ապա յուրաքան-
 չյուրը կարող եր տեսնել այն, ինչ վոր ողերևութարաններն ու
 սպաշունները վազուց գիտեն, այսինքն այն, վոր մեզ շրջապատող
 ամբողջ ողը զգալի չափով կազմված և հորձանուանների և փո-
 թորիկների հոսանքից: Մենք շեյինք կարողանա մեզ համար ան-
 տեսանելի այդ աշխարհում կատարել թեկուզ մի քայլ առանց
 այն բանի, վոր չհանդիպենք ամեն տեղ Երարձրացող ջրվեժներից:

1) Մինչդեռ վերջին ժամանակներու մշակում են հոկայական քարերու-
 թյամբ (հաջուրագոր մեարեր) քամու աշխարհական ունեցող առանցյակ հազա-
 րագոր կիւզառ քամու ուժակայանների հախոգծերը: Տես լըոցացիւ XII
 գլուխը: Ամբ:

Հիշատ այնպիսիները, ինչպիսիներն սաացվում են, յեթև Պրվես
պատկերացնող մի կինոժապավեն ցուցադրվի հակառակ ուղղու-
թյամբ: Վորովգետես իսկական ջրվեժներն ոգտագործում են շատ
մեծ քանակությամբ, միանգամայն տրամարանական և մտածել
վեր բարձրացող ողային հոսանքների ոգտագործման մասին: Արե-
վազարձային ցիկլոնները մեզ ցույց են տալիս, թե վորքան
եներդիա կարող և պարունակվել ողային հոսանքներում:
Պարզ գատառությունները բերում են մեզ այն յեղբակացության,
վոր այդ հոսանքները նույնակես անօպտա են, ինչպես և ջրի հո-
սանքները, վորովհետեւ յերկուոն ել ծագել են մեկ աղբյուրից՝
արեից: Ողերնութարանները վաղուց արգեն հետազոտել են այդ
յերեւյթները: Բայց նրանց դիտելիքները մնացել են կցկառուր:
Վորովհետեւ զեռ վոչ վոք առանձին փաստերը չի ամփոփել մի ընդ-
հանուր պատկերում: Իմ առջև ե ողերնութարանության դաստ-
ուրը: Նրա մեջ յետ կարողում եմ, վոր սթնոլորտում կան միան-
դամայն հաստատուն հորձանքներ, ամրող ճանապարհ ուղղու-
թյամբ հենց նույնքան հաստատուն և նույնքան հայտնի, ինչ-
պես և Գոլֆշտրեմը: Ամենալավ որինակն են հանդիսանում պաս-
տատները, վորոնք ուղղված են դեպի հասարակածը, վորաեղ նը-
րանք առաջացնում են համարյա ուղղաձգորեն վեր բարձրացող
հղոր ողային հոսանքներ: Այդ յերեւյթին հակառակն ե տեղի
ունենում քենոների մոտ: այնաեղ ընկնող քամիները փակում
են շրջապտույտը: Ցես թերթում եմ շարունակությունը և կար-
գում, վոր յերբ պատուանողմի շրջանում ծանրաչափը 760 մմ
նորմալ ճնշումից ընկնում ե մինչև 715 մմ, այն ժամանակ ճնշում-
ների այդ տարրերությունն ստեղծում ե բամի, վորը փշում և 180
կմ/ժամ արագությամբ: Հայտնի յէ այզպիսի փոթորիկների հըս-
կայական հներգիան և նրանց վիթխարի ավերածությունները: Դըր-
քի մի ուրիշ տեղում զրված ե, թե ողի ճնշումը, վորը ծովի մա-
կարգակի վրա միջին հաշվով հավասար է 760 միլիմետրի, 1000 մ
բարձրության վրա նվազում ե մինչև 603 մմ: հետեւաբար այդ
մարքերությունն անհամեմատ ավելի մեծ ե, քան ճնշումների
տարրերությունը ցիկլոնի շրջանում: Ողի ջերմաստիճանը նույն-
պես արագ կերպով նվազում ե բարձրության ավելանալու հետ
միասին, ինչպես ցույց ե տրված 10-րդ նկարի վրա:

Դյուրոն ամփոփեց այդ գիտողությունները և նշված փաս-
տերի հիման վրա կառուցեց նախազիծը, վորը թույլ ե տալիս սա-
քերի գագաթների վրայի փոքր ճնշումների շրջանի հետ անմի-


ջականորեն միացնել մեծ ճնշում ունեցող ողը, վորը տեղավորված ե արևի ճառագայթներով տաքացող հովիտների վրա: Այս յեղանակով զյուտարաբն ուղղում ե արհեստական ցիկլոններ ստեղծել:

Պիտին չպետք ե յերեան բն-
բն ավերումների ձևով, ոյլ
հուռ և ժրային կերպով, ինչ-
պես նրանց յեղրայրակիցնե-
ը՝ ջրվեժները, շարժեն առուր-
րինները: Մենք տեսնում
ենք, վոր այդ լուծումը
պարզ ե, ինչպես կոլումբո
սի ձուն: Իրագործութեա
այստեղ նույնպես պարզ ե,
ինչպես վոր այդ միշտ լի-
նում ե խսկական հանճարեղ
իդեաների դեպքում:

Այդ նպատակով վերց-
նում են 1000 մետր յեր-
կարությամբ յերկու կողմից
բաց խողովակ և մի շատ
շուկ շրջանում որինակ՝
Սահարայում, հենում են
հսարափորի չափ ավելի դիմ
սարի կողին (նկ. 11): Խո-
ղովակը ներքնում լայնա-
նում, դանում և վիթխարի
ձագար, վորը գործնականորեն

ունի մեծ տափակ ջերմոցային կտուրի ձև, վորը տաքանում ե արևի ճառագայթներով և բարձրացնում ե ողի ջերմաստիճանը մինչև տռափելագույն հսարափոր չափերի:


Այդ ծածկիչը առջեկ կողմից լայն բացված ե ձագարի
նման աստիճանարար նեղանում ե: Դրանով ձեռք ե բերվում նաև հետեյալը՝ զեսի ծածկիչի տակը ձգտող ողն ստանում ե փոթոր-
կային շարժում, վորը միանգամայն նման ե ցիկլոնի սկզբում
առաջացող շարժմանը: Այսպիսով ողը մանում ե խողովակի մեջ
վորի տրամադրը պետք ե շատ մեծ համարել, ընդ վորում խողո-
վակը պետք ե ունենա հարթ կտորներ, վարպեսզի ողի հոսանքին:



Նկ. 10. Ցերկը վրա բարձրության ավելաց-
ման գեղագում նվազում ե ողի ջերմաստի-
ճանը:

Սեկայն ֆոկուրներից մեկն, ե գոր ոդ-
ապործել և Դրուրն քառու ուժի կայա-
ների նախաչծում:

Հիմանդրաբի: Դրսից խողովակը ծածկված և ջերմանթափանց շնորհով, վորպեսդի տաք ողնու իր բարձրանալու ժամանակ հնարավորի



չափ ավելի քիչ ջերմություն կորցնի, իրոք, վորքան մեծ և խողովակի ներսի ողի և խողովակի վերևում յեղած ողի ջերմաստիճանների տարրերու թյունը, այնքան ավելի մեծ և արագու թյունը, վորով ողային հոսանքը ալանում և խողովակի միջով, Հաշվումները ցույց են տալիս, վոր այդպիսով կարելի յես ստանալ 180-200 կմ ժամ արագու թյունն Այդպիսի ողային հոսանքը գործնականորեն կարող և համեմատվել ցիկլոնի հետ, վորը կաշէանդված

Նկ. 21 Դյուրոյի քամու ռեժիսյանի սիեման: Մովի մակարդակին հազարոր հարթություններ, վորը տաքանում և արեգով, 1000 մետրանոց վեր բարձրացող խողովակով միացվում և արքի դադարի վրայի նվազեցրած ճնշումներէ շրջանի հետ: Այսպիսով խողովակում առենդվում և ճշատվեն վեր բարձրացող մի հոսանքը վորի արագու թյունը և առավագությունը 60 մ/վայրկ: Այդ հոսանքի հզար հներդիքան կարող և սպազուրծվել քամու տարրերներում:

Խողովակի հմբցում ապահեն ծածկիչը սահեծում և տաքացում, վորն ել ավելի ռեժիսուցնում և ողի հոսանքի արագու թյունը:


Նու թյուն, հետ և ուղղվում գեպի հովիտը, վորտեղ նաև կարող և շարժման մեջ դնել ուրիշ մեքենաներ:

Այդ իգեան սրամքու յեղբակացու թյուն և այն որենքներից, վորոնք մինչև այժմ չեն սպասազործված, բայց հարյուրավոր անդամ հաստատված են ճշգրիտ դիտողություններով: Այդ յեղբակացու թյունների ճշտությունը հաստատվում և փորձով, վորն ամեն մեկն ինքը կարող և կատարել: Վերցնում են մի կտոր յերկաթաթիթեղ, նաև պատկերացնում և հարթությունը, յերկաթաթիթեղի

տակ տեղավորում են սպիրտայրոցը, վորը փոխարինում և արեի ձառագայթներին։ Տակից արգած ջերմությունը տաքացնում է յերկաթաթիթեղը շրջապատող ջերմաստիճանից մի քանի աստիճան ավելի բարձր։ Դրա հետևանքով յերկաթաթիթեղից բարձրանում է ողի տաք հոսանքը, վորը բացահայտողն կարելի յե զգալ, յեթե ձեռքերս կամ յերեսներս մոտեցնենք նրան։

Այժմ մեր մինյատյուր հարթությունից մոտավորապես 25 սմ հեռավորության վրա տեղավորենք մի մինյատյուր տուրքին, վորն իրենից ներկայացնում և պարզ ողային անիվ, տանավաճառներում ծախվազ խողալիքների նման։

Անիվը պետք է զրված լինի հորիզոնական դիրքում նրա համար, վոր ողը ճիշտ ընկնի նրա թեկերի վրա (նկ. 12), իսկ ինչ է կատարվում։ Վոչինչ՝ Ողային հոսանքը չափազաց թույլ ե, վոր պատացնի անիվը, վերջինս անշարժ և մնում, յեթե նույնիսկ ուժեղացնենք սպիրտայրոցի ըսցը և այդպիսով ուժեղացնենք տաքացումը։ Սակայն յեթե յերկաթաթիթեղի և տուրքինի միջև տեղավորենք, ինչպես ցույց ե արգած 12-րդ նկարի վրա, մի խողովակ, վորը ներքեւում ավերջանում է տափակ ձագարով, այն ժամանակ անիվն իսկույն ևեթ կոկու պատճել։ Արագությունն արագ կերպով անում և թույլ ե տալիս հետևյալու սպային ուժեց հոսանքի առաջանալու մասին։ Յեթե վերցնենք ձագարավոր խողովակը, այն ժամանակ անիվը կանգ կառնի, իսկ յեթե մենք բազուկ կազմակերպում ենք ողային հոսանքը կակուի պատճել։ Այդ փորձի պարզությունը ուժեղացնում է նրա համոզեցնեցին լինելը։ Այստեղ մենք դորձ ու-



Նկ. 12. Այն ողարզ փորձը, վորք միջնադրությունուն աղացնեցնել և եր կուռագուումների ճշուությաւնը։

Յերկաթաթիթեղը պատկերացնում և Սանրան, սպիրտայրոցը՝ աշեկ ճառագոյացնեցը։ Վերեւում փոքը անիվը պատկերացնում և քամու առաջընեցը, Յեթե սպիրտայրոցի ըսցը զննեց յերկաթաթիթեղի ոտկը, այն ժամանակ ողը ողի հոսանքներն սկսում են բարձրանալ Բայց առւրբինը միայն այն ժամանակ է սկսում այլառել, յերբ ողային հոսանքը ձագարում իսկ զովակի ողնությումը ուղղվում է վորու հանապարհով։

հենք միանդամայն բնական յերևույթի հետ հետեւարար, մենց կարող ենք յենթագրեն, վոր առք սղի հսկայական գանգվածները, զարոնք անընդհանուր առաջանում են խսկական հարթավայրի վրա և ամբողջ իրենց մակերևույթով տաքանում են արեի էլեկտր հասպայթներով, հսկայական ձադարավոր խողովակներում փախակերպվում—զառնում են վեր բարձրացող հզոր հոռանքը, վորը կարող և ողաջործվել ելեկտրոններդին ստանուած հասարաւ

Տեսական հցուադատուաները հաստատեւաց հետո մեզ մնում ե պարզել այն հարցը, թե տեխնիկան արդյոք ի վիճակի յե ըստ Դյուրոյի պլանների տեղակայուածներ կառուցելու, Բավական և մի հայացը զցել 11-րդ նշարի վրա, վորպեսզի դրական պատասխան տանք, Ապակի ծածկելի կառուցումը դժվարություններ չի ներկայացնում, իսկ արդպիսի յերկարության խողովակաշարքեր տանաձին դեղոքներում վազուց արդեն կիրառվել են ջրմուղ կառուցելիս. չե վոր Ռուսա գետի հովտուած Գունիի տեղակայումը նույնիւ 1630 մ ճնշում և ողաջործում իր առողջինները շարժման մեջ դնելու համար. Զրի ճնշումը պահելու համար, այդպիսի խողովակաշարքերը պետք ե կազմված լինեն ամրողչածրդ պատպատե խողովակներից, Ընդ վորումադպրիսի խողովակաշարքն անհրաժեշտ և խնամքով ամրացնել, Ներկա դեղոքում մննը զործ ունենք ավելի շատ ծիսահան խողովակի հետ և արդ պատճառով կարող ենք յուա զնայ զգալիորեն ավելի թեթև կառուցվածքով. սրինակ՝ կարելի յե վեցցնել 10 մ տրամագիծ և 1000-ից մինչեւ 1500 մ յերկարություն ունեցող յերկաթարետոնային խողովակ Խողովակում սղի բարձրանալու ժամանակ սրա հաստատուն ֆերմատիճանի պահապանման խողիրը նույնպես հեշտ և վճռվուած, վորովհետեւ դրա համար զոյություն ունեն շատ հարմար միջոցներ: Գուցե ամենից ավելի նպասականարմար ե խողովակը կառուցել ֆերմաթառնից (Leichtbeton), վորի անթիվ ծակոտիճաները հիանալի չերմային մեկուսացում են ներկայացնում, Մնում ե միան կառուցել մի մեծ ողային տուրքին: Բայց ջրի և շողու հետ աշխատելու վորը ունեցող մնը ինժեններներին այս խողիրը ևս, հազարբեն շի շփոթեցնի:

Այդպիսի աեղակայումը վոչ մի գեպրուած չի կարող հիդրավդրիկ հայանից ավելի թանկ լինել, վորովհետեւ այստեղ վերանում են ամրարածակները, ջրային կամերաները, պաշտպանական հարձաքեցումները, ջրանցքները և այլն: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի տեղակայումները հնարավոր են միայն




Հետո այս գործը պարզաբանվում է այս ձևակերպությամբ՝ որ առաջարկ է առաջնահարցություն տալու համար և առաջարկ է առաջնահարցություն տալու համար:

տաք յերկրներում. Դյուրոյի ցուցութերի համաձայն ամենից ավելի հարժար և 20° միջին ջերմաստիճանը ունեցող յերկու խոռոչների միջև ամենամեծ ջերմաստիճանի յերկու կողմում ընկած շրջանը (նկ. 13):

Մենք տեսնում ենք, վոր այդ շրջանը հսկայական տարածություն և բռնում, բայց նա ընդգրկում է համարյա թե բացառապես շատ քիչ ընակված յերկրներ, և մասնավորապես, ամբողջ Աֆրիկան, Նախ և առաջ բարենպաստ պայմաններ կան Սահարայում, վորանդ Ասիասի լեռների և Խոզզար լեռան յերեք լեռնաշղթաներն իրենց ուղղարկեց կողերով կարծես թե հատկապես ստեղծված են վեր բարձրացող խողովակների կառուցման համար, ընդ վորում հարեւան շրջանները՝ Ալժիրը, Թունիսը և Մարոկոն վազուց արդին եներզիայի նոր աղբյուրների քաղց են դզում: Ուստի արտեղ ել, ամենայն հավանականությամբ, կկատարեն առաջին փորձերը: Ցերե Նրանք հաջողությամբ պսակվեն, այն ժամանակ Հյուսիսային Աֆրիկայի և ուրիշ տաք յերկրների լեռնալանջերը հարյուր տարի հետո կունենան այն տեսքը, ինչպես ցուցյ և արգած 14 նկարի վրա: Նրանք խիս կերպով պատված կլինեն հողմառաւժային տեղակայումներով, վորոնք եներզիա կմատակարարեն վոչ միայն հարեւան շրջաններին, այլ կկապվեն Ծելքուղայի շրջանային կայանների հետ այն հաղորդման զերի միջոցով, վորոնք միացնելու յեն յերկու մայր ցամաքները: Աւապիսով հնաջողվի եներզիայի փոխանակություն հաստատել, վերտցնել այդ կայանների աշխատանքում յեղած միակ զժվարությունը, այսինքն այն, վոր նրանք կարող են միայն ցերեկն աշխատել: Ցերեկ հավասարաչափ աշխատանքը միանդայն կապահովվի, վորովհետեւ քաշող խողովակների հիմքում ողի հոսանքը միշտ միատեսակ հողորություն կպահպանի:

Գեաք և ի նկատի ունենալ, վոր սառ ողի հսկայական զանգվածները, վորոնք տեղափորված են այդպիսի հողմառաւժային տեղակայումների քաղաք խողովակների վրա զանվոր մթնոլորտի վերին շերտերում, հենց նույն շափով են կազմում ամբողջ սիստեմի հիմնական ժամը, ինչպես վոր ջրվեժի վերընում տեղափորված ջրի դանդվածները պատկանում ե այն հիզրոկայանի սիստեմին, վորը սնվում և այդ ջրվեժից: Ողի այդ հսկայական զանգվածներն այնքան ժամանակ կպահպանեն ողային հոսանքը, մինչև վոր հաղն ավելի առաջացած կլինի, քան թե մթնոլորտը: Այս պայմանը տաք շրջաններում միշտ իրազործելի յե ցերեկվա ընթացքում,



Նկ. 16. Ազգագոյի պատկերը. Սահմանայի հողմուռային տեղակայումները
Առջա լեռնաշղթայի գոհավեմ լանջերին:

սակայն դիշերը, արեի մայր մտնելուց հետո առաջացող արագ՝
սառեցման կապակցությամբ այդ պայմանը պահպանելը կասկա-
ծելի յէ: Ալդ զեղքում զուզընթաց աշխատանքը հնարավորություն-
ն տաշխա կանոնավորելու բեռնվածությունը: Ցերեկով եներպիան-
կուղարկվի եւեկարումատակարարման յեվրոպական ցանցը, ողնելու
նրա վերմային և հիգրոռուժային կայաններին, վորոնք ցերեկով
հակայտկան բեռնվածություն ունեն: Դիշերն եներպիան կարող-
է յեվրոպական կայաններից, վորոնք այդ ժամանակ բաժականա-
շտփ ազտա եներպիա ունեն, ուղարկվել զեպի հողմառւժային-
տեղակայումների աֆրիկական ցանցերը, վորոնց մեքենաները-
դիշերը կարող են կանգ առնել: Այսպիսով այս նախազիծն ել,
վորոնց ըստ մեր հասկացողությունների եներպիայի նոր և չլսված-
ուղրյուրներ և բաց անում, նպաստում և Ցեվրոպան Աֆրիկայի Հ-
հետ ամենասերտ կերպով միացնելուն:

ՀՈՂՄԱՑԻՆ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ

Քանի վոր Դյոււրոյի հողմառւժային տեղակայումները կապված են այն վայրերի հետ, վորածղ արևի ճառագայթներն ունեն ամենամեծ ուժը, ուստի նրանք Յեվրոպայում կիրառելի յեն միայն ծայր հարավում։ Ազեղի ցուրտ յերկրներում անհրաժեշտ և ուրիշ մեթոդներ վորոնել, յեթե այնուեղ ևս ցանկալի յե ոդտագործել քամու ուժն եներզիա ստանալու համար։ Փոքր մասշտաբով արդեն գաղ ժամանակներից սկսած դա ել հենց գործադրվում ե հյուսիսային Յեվրոպայում, վորովհետև Նիդերլանդիան և Հյուսիսային Դերմանիան կարելի յե համարել հողմաղացի հայրենիքը։ Այն, վոր հին հողմաղացը պիտանի է հողմային մեքենաց չե, զիտեյուրաքանչյուրը։ Միևնույնը կարելի յե ասել նաև նրա հաջորդի՝ հողմային տուրբինի մասին, վորը նույնպես կարելի յե ոդտագործել իրեն փոքր հղորություն ունեցող մեքենա։ Այդ մեքենաները լավացնելու շատ փորձեր են յեղել, վորովհետև քամու ոդտակար գործադրության հարցն անհիշատակելի ժամանակներից սկսած հանդիսանում ե զյուտարարների սիրած պրորկեմը։ Մինչև այժմ յեղած բոլոր կոնստրուկցիաները կառուցված են հենց միենույն հիման վրա։ Քամին շարժում ե բազմաթե պրոպելլերը, այս այն ձեւ ե, վորի որինակն է հանդիսանում վենտիլյատորի աշխատանքը, թեորիապես այդ յերեսութը հասկանալի յե և առարկությունների շի հանդիպում, բայց գործնականի մեջ այն տեղափոխելն այնուամենայնիվ վորոշ գժվարություններ ե ներկայացնում։

Ամենից առաջ անհրաժեշտ ե պրոպելլերը դնել բարձր կառուցումի գաղաթին և այն ել միանգամայն բաց, այնպես վոր նայենթարկվելու յե բոլոր մթնոլորտային աղղեցություններին։

բացի այդ, հարկավոր ե քամու, ուղղության յուրաքանչյուր փափոխության ժամանակ կարողանալ շուրջ տակ ծանր հողմային ակղակայումը, վորր, սակայն ցավոք սրտի, արգելվ չի հանդիպանում այն բանին, վոր քամու անկման անկյան նպաստավոր չլինելու դեպքում ոգտակար զործողությունը մոտենում ե զերոյի: Այսուհետև, անհրաժեշտ ե ուղղաձիգ մետաղաձողերի ոգնությամբ պրապելլերի պառույտը հաղորդել զեպի յերկրի մակերևույթը, վորից հներդիայի մեծ կորուստ և առաջանում: Վերջապես, հողմային ակղակայումը պետք ե շափականց մեծ լինի, յեթե նա քամու մոտավորապես օմլվայրվանի հավասար միջին արագության դեպքում պետք ե առ զոնե փոքր ինչ զգալի հզորություն, վարովնեան քամու եներդիան, վորը կարելի յէ ոգտագործել, շափականց արագորեն նվազում ե քամու ուժի թուրլանալու հետ միասին:


Այս ամենը պարզ կերպով ցույց են տալիս, վոր այդպիսի հիմքի վրա իսկական հոգմառաւմային տեղակայումները յերրեք շեն կարող առաջանար: Յեթե ու զում են դրան հասնել, ապա անհրաժեշտ և վարունել նոր, գեռ վոտք չզիպած ուղիներ: Այդպիսի ուղիներ հայտարերեցին Սեն-Միրի աերողինամիկական ինստիտուտում կատարված հետազոտությունները, վորոնք բուրուսին ուրիշ նպատակներ ենին հետապնդում, այն ե, բնակարանային և աշխատանքային շենքերի ոգափոխության համար և թե զործարանային ծխնելույզների ոգաբարձությունն ավելացնելու: Համար:

Խնդիրը լուծվեց անսպասելի հաջողությամբ: Փորձնական անդակայումն իրեն ցույց տվեց վորպես իդեալական հողմառաւմային մերենա, վորի ոգտակար զործողության զործակիցը համարյա թե 100 0 0 ել 15-րդ նկարը բացատրում ե նրա կառուցվածքը, վորն իրականացվում ե առանց արտաքին շարժական մասերի: Պըսից յերեսում ե միայն աշտարականման զլանաձև խողովակ՝ թերթավոր յերկանից շինված ծխահան խողովակի նման՝ վորը վերին ծայրում վարու տարածության վրա շրջապատված ե բավական կարճ զլանավ: Այդ արտաքին ողակը ներքեմից պահվում ե նեղ կողերով, բայց մնացածում բաց ե յերկու կողմից: Ամրող մեացածը պարզ կլինի 15-րդ նկարից:

Ինչ կողմից ել ե ինչ անկյան տակ ել վոր քամին փշի, հետեանքը միշտ կլինի միենույնը, այն ե՝ ողի ուղղաձիգ հոսանք զլանաձև աշտարակում: Ուրիշ խոռոչով, շարունակ իր ուղղությունը և ույժը փոխող քամին այստեղ դառնում ե մշտական ողային հոսանք: Թեև այդ հոսանքի արագությունը ակներև ե, վոր-

վում ե, բայց նա միշտ հաստատուն ուղղություն ե պահպանում։ Այդ պատճառով բավական ե, վոր հոգմալին աշտարակի ներքեւ հիմքում դրվի հորիզոնական դիրքով պառկած տուրրին, վորպեսզի ոտանանք քամու եներդիային համեմատական հզորություն, վոր կանչետանար քամու հետ միասին, անկախ վերջինիս ուղղությունից, այսինքն՝ դորձնականորեն յերրիք չեր անհետանաւ։


Հողմային աշտարակի հիմքում բոլոր շարժական մասերի (տուրրինի և նրա աշխատեցրած զեներատորի) այդպիսի տեղադրության մեջն ե դանդում այդ տեսակի հողմառուժային տեղակայումների մեծ առավելությունը, վորովհետև այդ դասավորությունը թույլ է տալիս հեշտությամբ մոտենալ մեքենաներին, վորոնք մինուոյն ժամանակ պաշտպանված են վատ յեղանակի բոլոր աղղեցություններից, ճիշտ այնպես վոր սովորական։



Նկ. 15 Հողմային աշտարակի սխեման

Կոնսարուկցիա ունեցող ելեկտրոկայաններում, Յերրորդ առավելությունն այն է, վոր ոգտակար գործողության գործակիցը շատ ավելի մեծանում է, վորովհետև ներծծվող ողի արագությունը միշտ հապատար է քամու արագությանը (իրըն կարուստներ պետք է հաշվի առնել միայն շփման ժամանակ առաջացած կորուստները)։

Եյսպիսի սկզբունքի վրա միանդամայն հնարավոր է կառու-



Հ. 10. Հանուայի աշտարակաշելք գումառ հնէրդիայի սպառըն համար

ցել ամենամեծ հզորությունների տեր հոգմառւժային տեղակայումները:

Թե ինչպիսի տեսք կունենան նրանք, ոույց և տալիս 16-րդ նկարը—մի յերեակալական պատկեր, մինչև վորի իրադրեաւը մենք այնուամենայնից զուցե գեռ ապրենք, վորովհետեւ այսոր վան որն արգեն հոգմային աշտարակները կարող են լինել եներդիայի արժեքավոր ազրյուրներ այն շրջաններու մ, վորոնք ելեկ-աըրումատակարարումով չեն ընդդրկված։ Բայց ապագայում կարելի կլինի զբանք դասավորել բարձրավագանդակների և լուսաշղթաների վրա, հարյուրներով միացնել և մարտկոցներից մեջ և այդ ձևով ստեղծել մեծ հզորություն ունեցող ուժական տեղակայումներ, վորոնք ոզտազորեաւմ են քամու եներգիան։ Այդ ուժական տեղակայումները հիդրոկայանների հետ միասին բավարար եներդիայի մատակարարման ազրյուրը կլինեն ածուխի պաշարների սպառման զեղքում։

ԱՐԵՎԱԴԱՐՁԱՑԻՆ ՇՈՎԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԵՆԵՐԳԻԱՑԻ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ

1881 թ. սեպտեմբերի 17-ի "Revue Scientifique" ժուրնալում լույս տեսավ մի ուշագրավ հոդված, վորք հեղինակն է պրոֆ. դ'Արտոնվալը, վորք հետազայտ ականավոր ֆիզիկոս դարձավ: ԵՄարով փորձենք տեղափորել շոգեկաթառն Դրենելի ջրհորում, վորք 30° ջերմություն ունի: Ցեմե այդ կաթսային պատկանող կոնդենսատորը վոռովիլու լինենք ջրմուղի ջրով, վորք միջին հաշվով 15° ջերմություն ունի, այն ժամանակ կոտանանք 15 ջերմաստիճանի անկում: Թող շոգեկաթառն ջրի փոխարեն լցված լինի հեղուկ ծծմբային թթվով, վորք մինչև 30° տաքանալիս տալիս և 4,7 մրն շողու ճնշում, այն ժամանակ կոնդենսատորի ճնշումը մոտավորապես կիսվելու միայն 2,8 Մրն: Ճնշումների մեջ այդ արքերությունը համապատասխանում է մոտավորապես 2 մրն մշտական ճնշման, վորք մեզ համար զժվար չեմ¹⁾:

«Բնությունն արդյոք այդպիսի պայմաններ հաճախ ե տալիս մեզ, — հարցնում ե հոդվածն այնուհետև: — Անշուշտ, — ասում ե պատասխանը, — վորովինետե տաք ազրուրների պակասություն:

1) Տերմոզինոսիկայի յերկրորդ որենքն տառամ է, վոր ջերմությունն աշխատանքի վերածելու: Համար միշտ անհամեմատելի ունենալ ջերմաստիճանների յերկու մակրոդակ, այսինքն՝ ջերմաստիճանների տարբերություն: Այսպես, որինակը ընթացիկություն մենց ունենց մի կողմէց մեոցը առջ բենդին շողիների այրման ջերմաստիճանը, իսկ մյուս կողմէց՝ ցըշապառ սարը տարբերությունը: Շոգենուժային տեղակայումի մեջ կարելի յն միմյանց հակազքի տաք դագերը՝ ածուիք այրման արդյունքը շոգեկաթառների տակ և կոնդենսատորի տակցնող ջուրը, վորակ այդ շոգեները նորից ջուր են դանում: Այդ որենքից հետում ե, շնչակառակը, վոր ջերմաստիճանների յուրացանցուր տարբերություն կարող է պատարացնել հներգիս սառնայու համար: Հետագա լորագրանքը հասկանալու համար այս փառաերի գիտենալու անհամելու եւ:

շկա, Ասենք, կան զեռ ելի ջերմության ուրիշ աղբյուրներ, վոր կարող են ողարագործվել Այն ե՛ մենք նույնպիսի հաջողությամբ կարող ենք մեր կոնգենսատորը տեղափորել սառուցի մեջ, իսկ շոգեկաթսան՝ 15° ջերմություն ունեցող գետի ջրի մեջ, այդ գեղեցւում նույնպիս մենք ունենք 15° ջերմաստիճանի անկում և դրանով իսկ շողու նույն ճնշումը, ինչպիս վոր առաջ:

Իդեալական կիրներ կաթսան տեղափորել հասարակածի մոտ ծավում, իսկ կոնդենսատորը՝ բեկոխ հավերժական սառուցիներում: Գործնականորեն բոլորովին հարկավոր չե կառուցել այդպիսի յերկար՝ միացում, վորովէետն ջուրը ծովի խորքում, նույնիսկ հասարակածում, ունի միայն 40 ջերմություն: Այսպիսով բավական եր կաթսան տեղափորել ջրի մակերնույթի վրա, իսկ կոնդենսատորը՝ ծովի տակ-1000 մետր խորքում, վորովէպի ունենանք ջերմաստիճանի բավարար անկում:

Մենք կարող ենք պատկերացնել, թե կես զար առաջ ինչպիս ծաղրեցին այն ժամանակ զեռ քիչ ծանոթ յերիտասարդ ֆիլիկոսին: Ամենայն հավանականությամբ զրանք նույնիսկ քննարկության արժանի չեյին համարում: Հենց այդպիս եր այն բոլոր հետագա պյուտարաբների բախտը, վորոնք հանդիս եյին գալիս հասարակայնության առաջ հենց նույն իդեալյով, միայն ավելի խնամքով մշակված, այն ե՛ ամերիկացի Կեմպբելլի (Campbell) հետ 1913 թ. իտալացի Դորնիկի և Բոդիայի հետ և գերմանացի Ֆիզիկոս Բրոյուերի հետ (Bräuer), վորն այդ պրոբլեմը մշակեց, թերևս, ուրիշներից ավելի խնամքով: Նրանց բոլորին համարյաթե չեյին լուսում, և այն, ինչ վոր նրանք զրել եյին, մոռացության տրվեց, ինչպիս գ'Արտօնվալի հոգվածը: Այդ անեց մինչև այն ժամանակ, յերբ մի անդամ 1926 թ. նոյեմբերին Փարիզի Ակադեմիան ստացավ մի հաղորդագիր, վորի ընթերցումն ամբողջ աշխարհին հարկադրեց լարել ուշազրությունը, վորովէետն նա ստորագրված և համաշխարհային հռչակ ունեցող անունների կողմից:

«Պատիվ ունեմ. սկսում եր հեղինակը—Պ. Բուշերոյի և իմ անունից զեկուցելու Ակադեմիային այն հետազոտությունների արդյունքների մասին, վորոնք մեզ հնարավորություն տվին ըմբռնելու միանդամայն անսպասելի փաստեր ֆիզիկական աշխարհագրության բնագավառից:

Ինչպիս հայտնի յի, ծովի ջուրը 1000 մետր խորքության վրա տարեցարի 4—5³ հավասարաշափ ջերմություն ունի: Մյուս

Հողմագից՝ հայտնի յեւ, վոր արևադարձային ծովերի մակերևույթի ջերմաստիճանը հիմնականում տատանվում է 20° —ից մինչև 30° , Յելելով այս յերկու փաստերից, կարելի յեւ ուրվագծել առք ձովերի սպազործման վիթխարի պլանը, վորը վերջին հաշվով արևի ջերմության սպազործման պլանն եւ Առաջին հայացքից խորքային ջրերի սպազործումը դժվարին եւ թվում: Բայց այդ դժվարություններին հետ եւ հաղթահարել, վորովհետեւ բավական և մինչև ցանկալի խորությունն իջնցնել մի խողովակ, վորը լավ մեկուսացված եւ ջերմաստիճանի տատանումներից, այն ժամանակ սարը ջուրն այդ խողովակում բարձրանում եւ Վորովհետեւ խորքային ջրերն իրենց խորությամբ տարրերվում են մակերևույթի ջրերից, ուստի խորքային ջրերը չեն հասնում խողովակի ամենավերին ծայրին, այլ մոտավորապես 1 մետր ավելի ցած են մնում: Չուրը հարկագոր եւ պամպով բարձրացնել միմիայն այդ բարձրությանը, ջրի մնացած բարձրացումը տեղի յեւ ունենում՝ համաձայն հաղորդակից անոթների սրբնաբի:

Առաջին հայացքից դժվար հաղթահարելի խոչընդոտ եւ հանգիստանում այն, վոր խորքային ջրերի և մակերևույթի ջրերի ջերմաստիճանների միջև յեզած տարրերությունը կազմում է միայն 20° — 22° . Այստեղից ստացվող գոլորշու ճնշումն այնքան չընչին ե, վոր մինչև այժմ զեր յերեք իրեն եներդիայի ազրյուրը չի դորժածին այն հնաթաղրության պատճառով, վոր այդ բանի համար նաև չի հերիքի: Իսկ մեր փորձերը միանգամայն անսպասելիութին մեղ բերին ուրիշ յեղակացության:

Մենք ավելին շատ հետաքրքրությունից դրդված ստուգեցինք, թե արդյունք գոլորշու վերոհիշյալ ճնշումը բավական ենքան վորովին շարժիչ ուժ սպազործելու համար: Այդ ուղղությամբ մենք առանձնապես մեծ հույսեր չեյինք տածում, սակայն ի մեծ զարմանու մեր՝ պարզվեց, վոր այդ ջրային գոլորշու եներդիան բավական եւ նույնիսկ գոյություն ունեցող շողետուրքինների համար՝ չնայած, վոր ճնշաւմների տարրերությունն այստեղ զգալիորեն ավելի ցած և սովորական մեծություններից:

